

## Հ. ԹՈՓՈՒԶՅԱՆ

### ՏԻՄՈԹԵՈՍ ՍԱՓՐԻԳՅԱՆԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԺԲ ԴԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂՔՅՈՒՐ

Հայ-եթովպական բազմագարյան ավանդական կապերի շնորհիվ եթովպակայի վերաբերյալ ստեղծվել են հայկական արժեքավոր աղբյուրներ: Դրանցից է Տիմոթեոսի (1822—1909) ուղեգրությունը<sup>1</sup>, որի առանցքը կազմում են այն պատմական իրադարձությունները, որ 1867—1868 թթ. տեղի ունեցան Ամհարայում, եթովպակայի ներքին գործերին անգլիացիների գինված միջամտության հետևանքով: 1871 թ. ուղեգրությունը, հայերեն բնագրի հետ միաժամանակ, լույս է տեսել ֆրանսերեն, քիչ անց նաև գերմաներեն թարգմանությամբ<sup>2</sup>, սակայն բավարար շափով ուսումնասիրված լինելով, գրեթե չի մտել գիտական շրջանառության մեջ<sup>3</sup>:

Ուղեգրության ճանաշում գտնելուն որոշակի արգելք են հանդիսացել նաև շարադրանքի յուրահատկությունները, առանձին սուբյեկտիվ կողմերը և, որ ամենակարեորն է, 1869—1870 թթ. նրա լույս ընծայվելու նախօրեին արդեն ընթերցողների սեղանին էին Հորմուգդ Ռասամի, Հոլլանդ ու Հոգիրի և մի շարք այլ հեղինակների ուղեգրական բարձրարժեք աշխատությունները, նվիրված անգլիացիների գինված միջամտությանը և եթովպակայի թեոգորոս թագավորի (1855—1868) եղերական վախճանին: Ստեղծվեց թյուր տպավորություն այն մասին, որ իբր Տիմոթեոսը ոչ մի նոր բան չի հաղորդում, այլ կրկնում է եվրոպական այդ հեղինակներին:

Տիմոթեոսի ուղեգրությունը ժամանակագրական առումով համընկնելով հանդերձ Ռասամի և մյուսների աշխատությունների հետ, նրանցից տարրերվում է աշխարհագրական և դրանով պայմանավորված պատմական ընդգրկումը: Այն դեպքում, երբ Ամհարան դուրս է մնացել վերոհիշյալ հեղինակների տեսադաշտից, Տիմոթեոսը քանի ուղեգրությունում շարադրել ամիս շրջագայել է հենց Ամհարայում և իր ուղեգրությունում շարադրել

ականատեսի վկայություններ անգլիացիների Մագդալա ներխուժելուց  
հետո Ամհարայում ստեղծված իրավիճակի մասին։ Պետք է նկատել,  
որ Եթովպիայի տարբեր գավառներում տարբեր իրադարձություններով  
նշանավորվեց Թեոդորոս Բ-ի պետության կործանումը։

Այսպիսով, բավարար հիմքեր կան Տիմոթեոսի ուղեգրության վե-  
րագնահատման ներկա փորձին ձեռնամուխ լինելու համար։

Պետությունն ու եկեղեցին այն երկու սյուներն էին, որոնց վրա  
խարսխված էր Եթովպիայի ֆեոդալական հասարակության ամբողջ շեն-  
քը։ Հիերարխիայի գլուխ կանգնած Թեոդորոս Բ-ը Եթովպական պետու-  
թյան ռազմաքաղաքական կենսունակության գրավականը տեսնում էր  
կենտրոնացած ուժեղ թագավորության մեջ։ Նրան հաջողվեց միավորել  
Ամհարայի, Տիգրեի, Շոայի, Գոզամի իշխանապետությունները, կազմել  
մեծաթիվ բանակ և ֆեոդալներին զրկել զորք ունենալու իրավունքից։  
Արգելվեց ստրկավաճառությունը, բարեփոխվեց հարկային դրությունը,  
պակասեցվեց ներքին մաքսատների թիվը, վճռական միջոցներ ձեռ-  
նարկվեցին բանդիտիզմի դեմ և այլն։ Տարբեր մասնագետներ հրա-  
վիրվեցին Եվրոպայից, սկսվեց ճանապարհաշինարարությունը։ Էա-  
կան տեղաշարժեր կատարվեցին նաև Եթովպիայի արտաքին քաղաքա-  
կանության բնագավառում։ Թեոդորոս Բ-ը շեղյալ հայտարարեց Ռաս  
Սլիի և նրա նախորդների ժամանակ Եվրոպական պետություններին  
տրված առհասարակ բոլոր արտոնությունները, սակայն նրան շա-  
շողվեց իրավահավասարության սկզբունքով պայմանագիր կնքել ոչ  
Անգլիայի, ոչ էլ Ֆրանսիայի հետ։ Սուեզի ջրանցքի կառուցումը, բարձ-  
րացնելով Կարմիր ծովի միջազգային առեւտրական նշանակությունը,  
խթանում էր այդ պետությունների Եթովպիա ներթափանցման քաղա-  
քականությանը։

Եկեղեցին պետության պաշտոնական գաղափարախոսության կրո-  
ղը լինելուց բացի նաև ֆեոդալական հաստատություն էր, և նրա հզո-  
րության տնտեսական հիմքը հողային սեփականությունն էր։ Երկրի  
տարբեր մասերում գործող բազմաթիվ եկեղեցիներն ու վանքերը ունե-  
ին հողային ընդարձակ տարածություններ, անհաշիվ գյուղեր, հսկայա-  
կան հարստություն։ Հոգեստրականության բազմահազարանոց բանակի  
յուրաքանչյուր անդամ իրավունք ուներ իր աստիճանի և զբաղեցրած  
պաշտոնի համեմատ եկեղեցապատկան հողեր շահագործելու։ Իր տըն-  
տեսական կարողությամբ Եթովպական եկեղեցու պատրիարքը՝ արու-  
նա Սալաման ավելի հզոր և հարուստ էր, քան մի քանի աշխարհիկ

ֆեղալ միասին վերցրած: Եկեղեցին ներկայացուցիչներ ուներ արքունիքում, գավառային վարչական կենտրոններում և, որ ամենազդիկավորն է, թագավորը չէր կարող օրինավոր համարվել մինչև չօժվեր արունայի կողմից:

Պայքարելով ֆեղալական սեպարատիզմի դեմ, Թեոդորոս Բ-ը փորձեց թուլացնել եկեղեցու ազդեցությունը: Եկեղեցու արտոնությունների սահմանափակման և եկեղեցապատկան կալվածքների մի մասի գրավման հիտեանքով, հոգորականությունը, արունա Սալամայի գրւխավորությամբ, դուրս եկավ Թեոդորոս Բ-ի դեմ և նույնիսկ գործիք դարձավ նրա ներքին ու արտաքին թշնամիների ձեռքում:

Եթովպական եկեղեցու հակաթիոդորոսյան դիրքավորումը նպաստում էր անգլիական ճնշման ուժեղացմանը: 1856 թ. Ալեքսանդրիայի դպտի պատրիարքը ժամանեց Եթովպիա և, ակներևորեն անգլիացիների պատվերով, փորձեց ուղիներ հարթել օտարերկրյա ներթափանցման առաջ, սակայն հանդիպելով Թեոդորոս Բ-ի բուռն դիմադրությանը, վերադարձավ ձեռնունայն: 1858 թ. պատասխանելով Եգիպտոսի փոխարքայի կրկնվող հրավերներին, Թեոդորոս Բ-ը Կահիրե ուղարկեց ասալաֆի Կանդիբայի դեսպանությունը, սակայն բանակցությունները խզվեցին, որովհետև փոխարքայի ներկայացուցիչների բերանով խոսում էին անգլիացիները: 1859 թ. Թեոդորոս Բ-ը, ոչ առանց հիմքի, կասկածամտությամբ վերաբերվեց Եթովպիա ժամանած եգիպտական դեսպանությանը և նրա ղեկավար Արդուլ Ռահմանին բռնադատեց միաժամանակ մնալ Մագդալայում: Ավելի ուշ, Եթովպիա ուղարկված Արկիկոյի նահիբը շղթայակապ բանտ նետվեց: 1862 թ. հովհանն Եթովպիա ժամանեց Դումկան Զարլզ Կամերոնը, սակայն Թեոդորոս Բ-ը չճանաշեց նրա անգլիական հյուպատոսի հանգամանքը և այլն: Անհնագանդ Թեոդորոս Բ-ին կարգի հրավիրելու նպատակով անգլիացիները ուժեղացրին ճնշումը. Եգիպտոսը զորքեր կենտրոնացրեց Եթովպիայի հյուսիս-արևմտյան սահմանների մերձակայքում, իսկ անգլիական նավատորմի միավորները պարեկում էին Տիգրեի ջրերում: 1863 թ. նոյեմբերին փորձ արվեց Ամֆիլայի ծովածոցը և համանուն կղզին դնելու անգլիական վերահսկողության ներքո: Անգլիական աքցանի սեղմվելու համարձակություն էր ներշնչում կենտրոնախույս ֆեղալներին, հակաթեոդորոսյան շարժումներ հրահրում տարրեր գավառներում:

1864 թ. հունվարին Կամերոնը և նրա գործակալները բանտ նետվեցին Եթովպիայի ներքին գործերին միջամտելու մեղադրանքով: Նրանց արգելափակումը չտեսնված աղմուկ բարձրացրեց ոչ միայն

Անգիայում։ Մայրահեղ գործիչները պահանջում էին վճռական միջոցներ, ընդհուպ պատերազմ՝ «նեզք բռնակալի» դեմ։ Ստեղծվել էր եթովպահայի ներքին գործերին զինված միջամտության հարմար պատրվակ, սակայն անգիական կառավարությունը փութկոտություն հանդես շրերեց, այլ հարուցեց մի շարք միջնորդություններ։ «Աքիսինիայում արգելափակվածների ազատության ֆոնդի» կողմից եթովպահա ուղարկվեց Ա. Բեկը, որը, սակայն, չկարողանալով հանդիպել Թեոդորոս Բ-ի հետ, վերադարձավ ձեռնունայն։ Ապարդյուն անցավ նաև եթովպահայի անգլիական նախկին Հյուպատոս Վոլտեր Պլովդենի եղբոր՝ Տրեվեր Պլովդենի «անձնական դիմումը» Թեոդորոս Բ-ի մարդասիրական զգացումներին։

Բոլորովին այլ բախտ վիճակվեց անգիական կառավարական պատվիրակությանը, որի կազմում էին Ադենի անգիական ոեզիդենտի առաջին օդինական Հորմուզդ Ռասամը<sup>4</sup>, թիջկ Հենրի Բլանկը և զինվորական աստիճանավոր Վ.-Ֆ. Պրիդոն։ 1865 թ. դեկտեմբերի 28-ին նրանք Մետեմայից անցան եթովպահայի արևմտյան Շնորհիկոնք և հատելով Ամհարայի գավառները (Զելգա, Դեմրեա, Տակուսա), 1866 թ. հունվարի 25-ին հասան Դամոտ, որտեղ այն ժամանակ գտնվում էր Թեոդորոս Բ-ի բանակատեղին։ Եթովպահայի տիրակալի հետ Վիկտորիա թագուհու անունից սկսված բանակցությունները, սակայն, դրական արդյունքի շնորհեցրին, որովհետև այդ օրերին Շոայում Թեոդորոս Բ-ի զորքերի պարտությունից հետո անգիացիներն անզիջող էին դարձել և անորոշ խոստումների փոխարեն պահանջում էին ազատ արձակել Հյուպատոս Կամերոնին ու արգելափակված մյուս եվրոպացիներին։ Հետևանքն այն եղավ, որ Ռասամը, Բլանկն ու Պրիդոն ձերբակալվեցին և ուղարկվեցին Մագդալայի ամրոցը, որտեղ և մնացին մինչև զինված միջամտության ավարտը։

1867 թ. ապրիլին անգիական կառավարությունը սկսեց նախապատրաստել զինված ներխուժումը եթովպահա։ Նրա ընդհանուր հրամանատար նշանակված Ռոբերտ Նապիրի տրամադրության տակ դրվեց արդիական զենքերով զինված ավելի քան 30.000 սարդ՝ մեծ մասամբ ասիացիներ և աֆրիկացիներ, որոնք նույն թվականի հոկտեմբերին անցան եթովպահայի սահմանը։ 1868 թ. ապրիլին Թեոդորոս Բ-ը տանուց տվեց Մագդալայի ճակատամարտը և, շցանկանալով գերի ընկնել, ինքնասպան եղավ։ Կողոպտելով Մագդալայի ամրոցի հարստությունները և վերցնելով արգելափակվածներին, նապիրի զորքերը հեռացան եթովպահայից։ Որպես զինվորական աստիճանավորներ Հոլլանդը, Հո-

վիրը, Մարիսամը և Բլանտֆորդը ներխուժող զորքերի հետ Զովայի նավահանգստից Ադիշերադ—Դոնգոլա—Գեշեն ուղեգծով իշել էին հարավ՝ մինչև Մագդալա, այստեղից էլ վերադարձել նույն ճանապարհով:

Այսպիսով, 1850—1860-ական թթ. անգլո-եթովպական հարաբերությունները խիստ սրվել էին անգլիական կառավարության Եթովպիա ներթափանցելու համառ փորձերի հետևանքով: Այդ քաղաքականությունը հանգեցրեց նախ Մասառայի անգլիական հյուպատոս Կամերոնի ու նրա մի շարք աշխատակիցների, հետագայում և Թեոդորոս Բ-ի հետ բանակցող անգլիական պատվիրակության անդամների արգելափակմանը: Նրանց ազատության հարցը վճռվեց Եթովպիայի ներքին գործերին զինված միջամտության միջոցով:

Այդ իրադարձությունների հետ առնչվեց նաև հայոց եկեղեցին:

Տիմոթեոսի ուղևորության վերաբերյալ հաղորդումներում խոսքը պնում է Կամերոնին և արգելափակված մյուս եվրոպացիներին ազատելու համար հայոց եկեղեցու միջնորդության մասին: Հստ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթի, Հորմուզդ Ռասամի առաքելության տապալումից հետո «Անգղիո դահլիճը վերջին փորձ մի ուղելով ընել», դիմել է հայոց եկեղեցու միջնորդությանը: Թվում է դրանում համոզված է նաև ինքը Տիմոթեոսը, երբ գրում է. «Կոստանդնուպոլս անգլիական դեսպան վսեմափայլ լորդ Լայնզ, իմանալով թե սուրբ Երուսաղեմ բնակող հապեշները հայոց պատրիարքի իրավասության տակ կդտնվին, [Կոստանդնուլ]պուսի [հայոց] ազգային վարչության և պատրիարքարանի միջոցով կինդրե ամենապատիվ ծասայի պատրիարքեն, որ յուր կողմեն պատգամավորություն մը յուղարկե առ Թեոդորոս, և անկե ինդրե Անգղիո հյուպատոսին և անոր ընկերաց ազատությունը»: Սակայն փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ անգլիացիները միջնորդության ցուցանակի ներքո ձգտում էին հասնել այլ նպատակների:

Հորմուզդ Ռասամի պատվիրակության ձախողումից հետո անգլիացիները հազիվ թե հույսեր կապեին հայ եկեղեցու միջնորդությանը: Եվ, իրոք, կոնդոնում արդեն որոշվել էր ողենքի միջոցով՝ հաղթահարել «Արքսինիայի դժվարությունները»: 1867 թ. ապրիլին, երբ Տիմոթեոսը տակավին Կահիրենում էր գտնվում, սկսվեց զինված միջամտության նախապատրաստումը: Անգլիացիները զինված ներխուժման հաջողության նախապայման էին համարում Թեոդորոս Բ-ի մեկուսացումը, և հնարավոր ամեն միջոց գործադրում էին, որպեսզի խորացնեն կամ առնը-

վազն պահպանեն այն թշնամական հարաբերությունները, որ գոյություն ունեին նրա և աշխարհիկ ու հոգևոր ֆեռալիների միջև։ Այդ կարգի առաքելությամբ Եթովպիա ուղարկվեց զնդապետ Մերևեթերը, որը, հաստատվելով Սենաֆեում, կապեր ստեղծեց նոր ոեժիմից դժոն ֆեռալիների հետ և զանում էր նրանց համոզել, որ «արիտանական ուժերը գալիս են պատերազմելու միայն Թեոդորոսի դեմ»<sup>8</sup>։ Թեոդորոս Բ-ի մեկուսացման գործում անգլիացիները որոշակի գեր էին վերապահել նաև Եթովպիայի հետ դարավոր առնչություններ ունեցող դրապիական և Հայկական դավանակից եկեղեցիներին։

Եթովպիայում մեծ հեղինակություն ուներ Ալեքսանդրիայի ղպտի պատրիարքը։ Նա էր նշանակում Եթովպական եկեղեցու գլուխ արունային, ընդ որում արունան, որպես կանոն, պետք է լիներ ղպտի եկեղեցականներից։ Դարերի խորքից եկող այդ իրավունքը ղպտի հոգևորականությանը հնարավորություն էր տվել ամուր կովաններ ստեղծելու Եթովպիայում, և Ալեքսանդրիայի պատրիարքը հաճախ միջամբ ստում էր ոչ միայն Եթովպական եկեղեցու, այլև արքունիքի գործերին։ Եփիպտոսում անգլիական ազդեցության ուժեղացմանն զուգընթաց Ալեքսանդրիայի պատրիարքարանն ավելի ու ավելի էր ընդառաջում անգլիացիներին և երբեմն էլ նպաստում նրանց Եթովպիա ներթափանցելու փորձերին։ Եթովպական եկեղեցու կալվածների գրավումից և հատկապես արունա Սալամայի արգելափակումից հետո ղպտի բարձրաստիճան հոգևորականությունն անվերապահորեն անցել էր Թեոդորոս Բ-ի թշնամիների կողմը։ Ինչ վերաբերում է Հայոց եկեղեցուն, ապա անգլիացիները բավականաշափ հստակ չէին պատկերացնում նրա քաղաքական նախասիրությունները՝ անգլո-Եթովպական Հակասությունների կապակցությամբ։

Հայ-Եթովպական եկեղեցական հարաբերությունները դարբնվել են Հակաքաղեգոնական համատեղ պայքարի բովում և այնուհետև շարունակվել համարյա առանց ընդմիջման։ Ժե դարից Օսմանյան կայսրության միաբնակները, այդ թվում Եթովպացիները, գտնվում էին Կոստանդնուպոլիսի հայոց պատրիարքի իրավասության ներքո<sup>9</sup>։ Ընդ որում պատրիարքն իրավունք ուներ դատել, պատժել, նույնիսկ աքսորել անհնազանդ կամ եկեղեցական կանոնների դեմ մեղանշող միաբնակներին։ Ժթ դարի կեսերից այլազգի միաբնակները, բաժանվելով հայոց եկեղեցուց, կազմեցին ինքնուրույն համայնքներ, սակայն Կոստանդնուպոլիսի և Երուսաղեմի հայոց պատրիարքները շարունակում էին բարեկամական սերտ կապեր պահպանել Եթովպական եկեղեցու և

արքունիքի հետ<sup>10</sup>, Ուստի հայոց եկեղեցին կարող էր որոշակի դեր կատարել Թեոդորոս Բ-ի մեկուսացման գործում:

Անգլիացիները, հայոց եկեղեցուն մոտենալով հնարավոր զգուշավորությամբ, ոչ Կոստանդնուպոլիսի, ոչ Էլ Երուսաղեմի հայոց պատրիարքի առաջ Եթովպիա պատվիրակություն ուղարկելու հարց չեն դրել, այլ պարզապես նրանց ինդիքել են, որ «Գիր մի գրեն առ Թեոդորոս կայսեր», հայցելով արգելափակվածների ազատությունը<sup>11</sup>: Հավանական է, որ անգլիական դեսպան լայնդի ձեռքում եղել է Հնդկահայերի մեջ անհայտ մի նամակ-հանձնարարականը ուղղված Կոստանդնուպոլիսի Պողոս պատրիարքին, ինչպես դժվար չէ կուահել «Սիոնի» այն հաղորդումից, որտեղ ասված է. «Վեհափառ թագուհվո կողմեն այսպիսի խնդիր մի առ հայոց ազգն ընելու ուշադրությունը շարժած են անշուշտ Հնդկաբնակ ազգայինք՝<sup>12</sup> Առանց Հնդկահայերի հեղինակավոր աղդեցության հազիվ թե անգլիական դեսպանին հաջողվեր պատրիարքից ստանալ այնպիսի կարևոր թղթեր, ինչպիսիք են «աղերսանաց գիրն առ Թեոդորոս» և Երուսաղեմի ծասի պատրիարքին ուղղված հանձնարարական նամակը, որով անգլիացիների առաջ բացվեցին Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դռները: Նկատի ունենալով մի շարք հանգամանքներ, ինչպես կնշվի քիչ հետո, ծասի պատրիարքը նպատակահարմար է գտել նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը և, մի կողմ դնելով Կոստանդնուպոլում պատրաստված, Պողոս պատրիարքի կնիքը կրող «աղերսանաց գիրը», գրել է Թեոդորոս Բ-ին ուղղված երկու՝ «օրհնության» և «աղերսանաց կոնդակներ», որոնք «անվտանգ անոր ձեռքը հասցնելու և աղերսագրույն ավելի կարևորություն տալու դիտավորությամբ, Եթովպիա է ուղարկել «հատուկ պատվիրակության մը ձեռքով»<sup>13</sup>:

Որ Տիմոթեոսի ուղևորությունը չի կատարվել անգլիացիների պատվերով, վկայում է նաև Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետը, որը մասնակցել է ուղևորության նախապատրաստմանը: Նա գրում է. «Անիկա (ծասի պատրիարքը—Հ. Թ.) բավական շհամարելով նամակով միայն միշնորդել, ինչպես առաջարկած էր Անգլիո տերությունը, այլ ի պատիվ հայ ազգին, ծառայություն մը մատուցանելու համար բրիտանական մեծազոր տերության, հանձն կառնէ վտանգի ենթարկել իր երկու միարաններուն կյանքը»<sup>14</sup>: Ծասի պատրիարքի ծառայասիրությունը բացատրվում է այն ուտնձգություններից պաշտպանվելու մտահոգությամբ, որ այդ տարիներին լատին և Հույն կղերը փորձում էին սուրբ տեղերում հայոց վանքի դարավոր իրավունք-

ների դեմ: Պատրիարքը հույս ուներ անգլիացիներին մատուցված ծառայությունների փոխարեն հնարավորություն ձեռք բերել նրանց պաշտպանությանն ապավիճնելու: Պատասխանելով Անգլիայի արտաքին դործերի պետական քարտուղար Կլարենդոնի՝ Տիմոթեոսի Եթովպակայությունը վերադարձը ողջունող նամակին, նա գրել է . «Երանի թե օգոստափայլ վեհապետն ու անգլիական ազգը կարևոր պարագաներու մեջ մանավանդ հիշեին հայոց ազգն ու անոր հովիվը, որ իր հարգալից անձնվիրության մեջ չթերացավ բնավ և պիտի չթերանա այսոհետև աւ, ինչպես կհավատանք որ Մեծն Բրիտանիո մարդասիրությունը և հզոր պաշտպանությունն ու խնամքը պիտի զգացվի մեզմե երեք»<sup>15</sup>:

Անգլիացիները հայոց եկեղեցուց ստացել էին շատ ավելի, քան ակնկալում էին: Բարձր գնահատելով եսայի պատրիարքի ծառայությունը, Ֆորեն Օֆիսը Երուսաղեմի անգլիական հյուպատոսին հանձնարարում էր. «Հայտնեցեք պատրիարքին այն վսեմ գաղափարը, զոր բրիտանական վեհափառության կառավարությունը ունեցավ նորին բարձրապատվության անհապաղ ի գործ դրած բարեկամական եղանակին վերա, ի մասին կարգադրության՝ հազարտություն անգլիացի բանտարկելոց ի Հապեշստան»<sup>16</sup>: Անգլիայի պաշտպանությունը որոնող պատրիարքն արդեն ներքաշվել էր անգլիական դիվանագիտության ջրապատույտի մեջ, և նրան սպասում էին տակավին այլ փորձություններ:

1867 թ. հունիսի վերջերին եսայի պատրիարքը հրավիրվեց Եգիպտոս, որտեղ նրան ընդունեցին կառավարական պատիվներով<sup>17</sup>: Կահիրեայ անգլիացիները նրանից կորզեցին երրորդ կոնդակը<sup>18</sup>, որը խոդիվ ԽՍՄԱՅԻԼԻ նույնիմաստ մի նամակի հետ միասին ուղարկվեց Եթովպիա՝ Եգիպտոսի անգլիական հյուպատոսի միջոցներով<sup>19</sup>: Այդ անհրաժեշտ էր, որպեսզի Թեոդորոս Բ-ին զրկեն մեկուսացումից գոնե մասամբ դուրս գալու վերջին հնարավորությունից, որը ստեղծվել էր հենց ներխուժման նախօրեին: Սեպտեմբերին թուրքական սուլթանը և Եգիպտոսի խոդիվը համաձայնվել էին, որ ներխուժումը Եթովպիա կատարվի եգիպտական տերիտորիայից՝ Եգիպտական զորքերի մասնակցությամբ: Հոկտեմբերի սկզբին Մասսուայում և Սուակինում 10.000 Եգիպտական զինվորներ, Արդ-ալ-Կադեր փաշայի հրամանատարության ներքո, սպասում էին ներխուժման հրամանի<sup>20</sup>: Սակայն ներխուժումը ստանալով հակաքրիստոնեական-մուսուլմանական երանգ, կարող էր երկուղ առաջացնել քրիստոնյա ֆեոդալների շրջանում, նրանց մղել լեզու գտնելու Թեոդորոս Բ-ի հետ<sup>21</sup>: Ուստի, նպատակահարմար նկատվեց Եգիպտական զորքերը ետ քաշել Եթովպիայի սահմանամերձ վայ-

բերից և ներխուժումը սկսել ոչ եգիպտական Զուլլա նավահանգստից: Եսայի պատրիարքի կոնդակը կոշված էր հանգստացնելու Թեղորորոս թ-ի թշնամիներին: Նրանց հավաստիացնելով, որ Եթովպիա է ներխուժումը ոչ թե մուտքամանական եգիպտոսը, այլ քրիստոնյա Անգլիան:

Եսայի պատրիարքը դժվարությամբ է ստորագրել այդ կոնդակը, ինչպես երեսում է Երուսաղեմի պատրիարքարանի մի հայտարարությունից, որտեղ ասված է. «Երանի, թե անգլիական կառավարությունը փոքր մի ևս երկայնամտեր և հայ նվիրակության միջնորդության վախճանին սպասեր նախքան պատերազմի դործողությանց ձեռք զարնելը, որոյ վերա իրավամբք յուր դժգոհությունն հիայտնն ն[որին] ամենապատիվ սրբազնությունը»<sup>22</sup>: Եսայի պատրիարքը հավանաբար հասկացել էր, որ անգլիացիները հայոց եկեղեցու այսպես կոշված միջնորդության պետք ունեին ոչ թե արգելափակվածների ազատության, այլ զինված ներխուժումը իրականացնելու համար: Դրանում նա համոզվեց հոկտեմբերին, երբ անգլիացիները ներխուժեցին Եթովպիա, սակայն զարմանալի է, որ շարունակել է մինչև տարեկերգ մնալ Կահիրեաւմ: Այն ժամանակ խիստ փոքրաթիվ եգիպտահայ համայնքը չէր կարող նրան շուրջ վեց ամիս հեռու պահել Երուսաղեմից: Չի բացառվում, որ անգլիացիներն արգելակել են նրա վերադարձը, սպասելով զինված ներխուժման բախտը կանխորոշող գործողությունների ավարտին:

Այսպիսով, Հորմուզդ Ռասամի առաքելության տապալումից հետո, երբ արդեն որոշվել էր Եթովպիա ներխուժել, անգլիացիներն ամուր կառչեցին հայոց եկեղեցուն և լիովին օգտվեցին Անգլիայի «Հոգոր պաշտպանությունը» որոնող Եսայի պատրիարքի ծառայություններից: Եթովպիայում անառարկելի հեղինակություն վայելող Երուսաղեմի հայոց պատրիարքարանի միջնորդությունն անգլիացիներին պետք էր ոչ թե Մագդալայում արգելափակվածների ազատությունը ձեռք բերելու, այլ Եթովպիայի հոգևոր ու աշխարհիկ ֆեոդալներին հանգստացնելու և ներխուժման ժամանակ Թեղորորոս թ-ին նրանց հնարավոր աջակցությունից զրկելու համար:

Երուսաղեմի հայոց պատրիարքի նվիրակների՝ Խաչակ եպիսկոպոս Աստվածատուրյանի և Տիմոթեոս վարդապետ Մաֆրիցյանի մասին պահպանվել են խիստ սակավ կենսագրական տեղեկություններ: Տիմոթեոսը ծնվել է 1822 թ. Կոստանդնուպոլիսում, կրթությունը ստացել է Երուսաղեմի ս. Հակոբի դպրությանը: Նա բավական ընդունակ անձնավորություն էր, հայերենից բացի գիտեր մի քանի լեզուներ, կարողությունից զրկելու համար:

Էր եվրոպական գրականություն, թերթեր<sup>23</sup>: Տարբեր ժամանակներում վարել է Երուսաղեմի հայոց վանքի գանձապետի, մատակարարի և Ալեքսանդրիայի վանքապատկան կալվածների տեսուչի պաշտոնները: Մի առ ժամանակ էլ անդամակցել է ս. Հակոբի միաբանության տնօրեն խորհրդին: Կյանքի վերջին տարիներին գործել է Երուսաղեմից հեռու, ստանձնելով թեմակալ առաջնորդի պաշտոններ: Վախճանվել է 1909 թ. Կոստանդնուպոլիսում «ալեորյալ» հասակում<sup>24</sup>:

Խսհակը ծնվել է (թվականն անհայտ է) Թուրքիայում: Սովորել է ս. Հակոբի դպրեվանքում: 1858—1864 թթ. նշանակվել է Երուսաղեմի պատրիարքարանի ներկայացուցիչ Կոստանդնուպոլիսում, 1865 թ.՝ Եգիպտոսում վանքապատկան կալվածների տեսուչ, Եթովպիայից վերադարձին՝ ս. Հակոբի լուսարարապետ: Վախճանվել է 1883 թ. Երուսաղեմում<sup>25</sup>:

Երուսաղեմի նվիրակները, ինչպես նշվեց, զինված էին ծսայի պատրիարքի զույգ կոնդակներով: Առաջինում՝ «օրհնություն» կոնդակում ոգեկոշելով Հայ-Եթովպական բարեկամությունը, պատրիարքը Թեոդորոս Բ-ին խնդրում էր ոի մասնավորից ոմկնդրություն շնորհել նվիրակներին, երկրորդում, որ կոչվում է «աղերսանաց» կոնդակ՝ «շնորհս առնել Հյուպատոսին Անգլիո եւ ընկերաց նորին, եւ ներել ամենայն հանցանաց զորս գործյալ իցէ նոցա երբեք»: Հնարավոր չի եղել կոնդակները թարգմանել Եթովպերեն, և դրանց գրաբար բնագրին կցվել է արաբերեն թարգմանությունը: Անհրաժեշտ է Համարվել կոնդակները թարգմանել նաև ֆրանսերեն ոի տեղեկություն եվրոպացի բաժանորդաց», այսինքն՝ Եվրոպական թերթերին: Նվիրակները բավական տարատեսակ «ընծաներեն ի զատ» Թեոդորոս Բ-ին տանում էին նաև մի ականակուռ խաչ, որը պարփակում էր նվիրական մի մասունք՝ «կենաց խաչափայտեն մաս մը» և այլն:

Անգլիայի արտաքին գործերի պետական քարտուղարի կարգադրությամբ Կոստանդնուպոլիսի անգլիական դեսպանը պարտավորվել է նվիրակներին ցույց տալ Հնարավոր ամեն օգնություն: Մեկնումի նախօրեին Երուսաղեմում նրանց է հանձնվել դեսպանի «հանձնարարական գիրը», որտեղ նշված էր նրանց «ուր և ինչ նպատակի համար ուղևորվելը»: Մինչև Եթովպիայի սահմանը նվիրակների «ուղևորության հարկավոր դյուրությանց և հոգատարության վրա մտածելն ու տնօրինելը» հանձնարարվել է Եգիպտոսի անգլիական ընդհանուր Հյուպատոս գընդապետ Ստանտոնին: Վերջինս նվիրակներին հանձնել է Սուեզի և Զիդդայի անգլիական «Հյուպատոսաց տրվելիք հանձնարարական թղթե-

րը»: Զիդայի անգիտական հյուպատոսի տեղակալ Ալֆրեդ Սանդիսը կազմակերպել է նրանց ուղևորությունը դեպի Սուակին, Կասալա, Գեդարեֆ և Մեղամմա, որտեղից էլ նրանք նույն տարվա հունիսի 9-ին մտել են Եթովպակիա:

Նվիրակներն անցնելով Վոհնիի գյուղերից ականատես եղան Տեսու Գորազեի կատարած ավերածություններին: Նրանց հաջորդ հանգրվանը Ճիրանայի Գարբե Մարիամ գյուղն էր, այնուհետև՝ Բիթանիա-Եսուս, Վոլտակե կամ Մելքոնդ ավանները, և, վերջապես, Ավիսա գյուղը, որտեղից էլ հունիսի 24-ին հասան Զար-ամբաւ: Տիմոթեոսը նշել է. «Բոլորովին ուժաթափ եղած լերան գլխույն մոտ հասեր էինք, երբ մեզ դիմավորեց Զելգայի գավառին կուսակալ և Զար-ամբայի պահապան Տասամմա իշխանը հարցուրի շափ զորքով»:

Նվիրակներին չի հաջողվել ուղևորությունը շարունակել մինչև Դերրա Տարոր, որտեղ այն ժամանակ գտնվում էր Թեոդորոս Բ-ը և բավական երկար կանգ են առել Զար-ամբայում: Սեպտեմբերի 9-ին Զարամբայի իշխան Տասամման նրանց ժամանման մասին տեղեկացրել է Թեոդորոս Բ-ին, որը պատասխանել է. «Աստուծով, մոտ օրերս կամ ես անձամբ կուգամ, կամ զորքերս խրկելով քովս կընդունիմ զիրենք»: Հոկտեմբերի 11-ին նվիրակները Թեոդորոս Բ-ին ուղարկում են «արարերեն գիր մը» հատուկ սուրբանդակի միջոցով: Թվում էր, շուտով կկայանա նրանց հանդիպումը, սակայն անգիտացիների հարձակման հետևանքով Թեոդորոս Բ-ը քաշվեց Մագդալա, և Տիմոթեոսը հնրավորություն շունեցավ հանդիպելու նրան:

1868 թ. հունվարին Տեսու Գորազեն, գրավելով համարյա անպատճան մնացած Զար-ամբան, գերի է վերցնում հայ եկեղեցականներին և տանում Զոգի (Վոգերայում), իսկ փետրվարին ուղարկում Զարդոգա, որտեղ նրանք մնում են մինչև Տեսու Գորազեին պարտության մատնած Վագում Գորազեն նրանց նախ տեղափոխում է Կիդանա-Մելքետ բնակավայրը, իսկ հունիսի սկզբներին՝ Թելեսա: Այստեղ նրանք ընկնում են հետին թշվառության մեջ: Տիմոթեոսը գրում է. «Մեկ ձեռք հագուստե ի զատ ուրիշ շըր մնացեր... այն էլ կարկատան կարկատանի վրա...: Ուժերնուս մուճակներն ալ հինացած ըլլալով, փոկերով տրեխներ շինեցինք»: Նրանց ապրուատի աղբյուրն էր «հոգևոր ու մարմնավոր» բժշկությունը, որի «ձայնը բոլոր թելեսայու մեջ տարածվեցավ և հեռավոր տեղերու ալ սկսան հիվանդներ բերելու»:

Ուշգրավ է, որ անգիտացիները նվիրակների ճակատագրով չեն հետաքրքրվել մինչև 1869 թ. կեսերը, երբ Եսայի պատրիարքը սկսեց

ցուց տալ լուրջ անհանգստության նշաններ: Ի պատասխան նրա դիմումների, Ֆորեյն Օֆիսը կարգադրում է, որպեսզի Եգիպտոսի ընդհանուր հյուպատոսը «ինչ որ հարկ է ի գործ դնել» նվիրակների վերադարձի համար: Այդ կարգադրությունից հետո Եգիպտոսի ընդհանուր հյուպատոսի տեղակալ Ստանլեյը նվիրակներին գրում է. «Վեհափառ թագուհին կառավարութենքն հատուկ հրամանագիր ստացած ձեր վերադարձը դյուրացնելու համար...: Ուստի այժմ վեհափառ թագուհին կողմեն գիր մի կուղենք նորին բարձրության Դորագե իշխանին, խնդրելով իրմե որ դյուրացնե ձեր վերադարձը և անվտանգ հասցնե զձեղ մինչև Մեծամմա, ուր բարձրապատիվ փոխարքայն ի պատիվ նորին վեհափառություն թագուհին և ձեր կրած սուրբ պաշտոնին հատուկ հրամաններ խրկած է զձեղ ամենայն սիրով ընդունելու և մինչև ի Կահիրե անվտանգ հասցնելու: (Սակայն այդ նամակը հապաղել է, և նրանք այդ կարգադրությունների մասին տեղեկացել են միայն վերադարձից հետո՝ Եգիպտոսի տեղեկացել են:

Ընդառաջելով անգիտացիներին, Տեկլա Գիորգիս վերանվանված Վագշում Գորազեն նվիրակներին գրավոր հայտնել է. «Եթովպի Տեկլա Գիորգիսի թագավորը սույն նամակը կուղարկե առ աբօնա իսահակ և առ արոնա Տիմոթեոս: Ինչպես էք, շատ լավ էք: Առաջ ճամբար լըլլալով սպասեցիք: Հիմա ձեր թագավորեն նամակ եկավ մեղի, գացեք երկիրնիդ: Երկուքնուր համար դեմազմաշ Անինենն երկու զորի ընդունեցեք: Ինչ որ ունիք առեք հետերնիդ տարեք ձեր երկիրը: Զեր վերադարձը լացուց մեզիք: 1869 թ. ապրիլի 16-ին Տիմոթեոսն ու իսահակը դուրս են գալիս Թելիսայից զինված մարդկանց ուղեկցությամբ և, կտրել-անցնելով Ագառի երկիրը, մայիսի 27-ին ոտք են դնում Տիգրեի սահմանագլխի Ֆենարոա գյուղաքաղաքը: Առաջնորդվում են նախ Աղուա, ապա Աքսում, որտեղ Տիգրեի մեծ իշխան Կասան (ապագա Յոհաննես թագավորը, 1871—1889) նրանց ընդունում է պատիվներով: Հունիսի 4-ին նրանք շարունակում են ճանապարհը դեպի Ասմարա, ապա Մասաուա, Ջիդա, Կահիրե:

Կահիրեում նվիրակներն արժանացել են բավական չերմ ընդունելության: Վիկտորյա թագուհին, արտաքին գործերի պետական քարտուղար Կլարենդոնը, Եգիպտոսի խորհիվ իսմայիլ փաշան, անգլիական հյուպատոսներ և այլ պաշտոնական անձինք ըստ արժանվույն բանավոր և գրավոր զնորհակալություն են հայտնել նրանց: Տեղեկանալով նվիրակների վերադարձի մասին, Կլարենդոնը Եսայի պատրիարքին գրել է. «Սույն լուրը մեծ ուրախությամբ ստացավ նորին վեհա-

փառությունը, և հրաման ըրավ ինձ, որ իմացնեմ ձեր ամենապատվության, թե որքան մեծ արժեք աված է այն սիրելի օգնության, որը ձեր տերությունը փոփաց շնորհել Հապեցստանի մեջ եղող յուր ծառաներուն միխթարության համար»<sup>26</sup>: Այդ առթիվ թագուհին բարեհաճել է նաև երուսաղեմի պատրիարքարանին նվիրել «յուր իշխան ամուսնույն և Գալլայի իշխանին կենդանագիր պատկերները»: Անգլիացիները դրամական որոշ օգնություն՝ 1025 օսմանյան ոսկի են առաջարկել երուսաղեմի հայոց վանքին, սակայն, ինչպես նշել է Սավալանյանը, Եսայի պատրիարքը չի ընդունել, քանի որ «նյութական օգնութենե ավելի բարոյական պաշտպանության կարոտ կհամարեր իր ազգը և Ս. Աթոռը»<sup>27</sup>:

Այսպիսով, անգլիացիները կազմակերպեցին երուսաղեմի հայոց պատրիարքի նվիրակների ուղևորությունը մինչև Եթովպիայի սահմանագլուխը: Ընկնելով ապստամբությունների կրակի մեջ, նրանք չկարողացան ճանապարհը շարունակել մինչև Թեոդորոս Բ-ի բանակատեղին, և շուրջ քսաններկու ամիս թափառեցին Ամհարայի տարրեր շըրջաններում:

Այդ անսովոր թվացող աշխարհում Տիմոթեոսը կուտակել է ամենատարրեր բնույթի նյութեր, որոնք շարադրված են նրա ուղեգրության մեջ:

\* \* \*

ԺՈ դարի երկրորդ կեսին սկսվեց Եթովպիայի համակողմանի հետազոտության ժամանակաշրջանը: Եթովպիա ժամանող գիտական արշավախմբերը, ճանապարհորդները, քաղաքական ու կրոնական գործիչները, տուրք տալով հանդերձ Անգլիայի և Ֆրանսիայի գաղութատիրական շահախնդրություններին, կուտակել են ճանաշղողական խոշոր նշանակություն ունեցող բազմահարուստ նյութեր: 1769—1772 թթ. շուտանդացի ականավոր ճանապարհորդ Ջեյմս Բրյուսի գիտական արշավախումբը, հետազոտելով հյուսիսային Եթովպիան, Աքսում և Գոնդար քաղաքները, Տանա լճի հարավային շրջանները, կուտակել է աշխարհագրական, պատմագրական, ազգագրական, լեզվագրական և այլ բնույթի հսկայական նյութեր: 1805 և 1809 թթ. Հենրի Սալտը ուսումնասիրել է հյուսիսային Եթովպիայի աշխարհագրությունը և առևտուրը, պատրաստել պատմական հուշարձանների գծագրեր, կազմել ամհարայա, տիգրինյա, ագաու, գալլա, սոմալի լեզուների առաջին արմատական բառացանկը: Ռոշե դ'Հերիկուրը ուսումնասիրել է հարավային Եթովպիայի տեղա-

գրությունը և երկրաբանությունը, կեֆերուրը՝ եթովպական բարձրավանդակի ժողովուրդների պատմությունը և ազգագրությունը և գալիքնիբերը՝ Աղուայի և Գոնդարի երկրաբանական ու օդերևութաբանական պրոբլեմները, Անտ. դ'Աբադին՝ եթովպական քաղաքների, կենդանի ու մեռած լեզուների, Լալիբալայի ժայռափոր եկեղեցիների, մանրանկարչության ու գրչության արվեստի, տարրեր գիտությունների պատմությունը: Էդ. Ռուպագելը պատրաստել է եթովպակայի ֆիզիկական և քաղաքական աշխարհագրության բավական ճշգրիտ քարտեզը, կազմել է բուսական ու կենդանական աշխարհի նմուշների հարուստ հավաքածու և, կատարելով օդերևութաբանական առաջին դիտարկումները, հայտնաբերել է կլիմայական մի շարք օրինաշափություններ: Ս. Դոբատը, Ժ. Լ. Կրապիցը, Կ. Վ. Իզենբերգը հետազոտել են եթովպական բարձրավանդակի ժողովուրդների լեզուները, Կ. Տ. Բեկը կազմել է եթովպակայի լեզվագրական քարտեզը և այլն:

ԺԹ դարի կեսերից եթովպական ուսումնասիրողները, կատարելով այս կամ այն եվրոպական մեծ պետության կառավարող շրջանների պատվերները, հակվում էին հիմնականում արդիական նշանակություն ունեցող պրոբլեմների վրա: Անգլիական հյուպատոս Վոլտեր Պլովդինը արժեքավոր նյութեր է հավաքել եթովպական քաղաքների, քաղաքային դասերի, ֆեոդալական հիերարխիայի, գյուղացիության և ցեղերի, ներքին ու արտաքին առևտուրի, եկեղեցու ու եկեղեցականության և այլ հարցերի վերաբերյալ: Մասառայի ֆրանսիական հյուպատոս Գիյյոմ Լեժանը ուսումնասիրել է եթովպակայի առևտրատնտեսական նշանակությունը, ներքաղաքական իրավիճակը, ֆրանս-եթովպական հարաբերությունները, եթովպակայի շուրջը ծավալվող անգլո-ֆրանսիական մըրցակցությունը, Ֆրանսիայի կարմիրծովվյան շահերի հետ կապված դժվարությունները և այլն: Աֆրիկա ուղևորվող ոռուսական առաջին գիտական արշավախմբի ղեկավար Ե. Պ. Կովալեսկին հետազոտել է ներքին եթովպական և Սպիտակ Նեղոսի ակունքների տեղագրությունը: Եթովպակավատ Առն. դ'Աբադին, ճանապարհորդ Հենրի Դուֆտոնը, միսիոներ Հենրի Շտերնը և ուրիշներ արժեքավոր նյութեր են հավաքել եթովպակայի սոցիալական, տնտեսական ու քաղաքական կյանքի, կառավարման ձևերի, կրոնների և այն վերափոխումների մասին, որ եթովպակայում կատարվեցին թեոդորոս Բ թագավորի գահակալության առաջին տարիներին:

Աղբյուրների հաջորդ խոմբը, որին պատկանում է նաև Տիմոֆեոսի ուղեգրությունը, բացառիկ կարևոր նշանակություն ունի եթովպակայի

1850—1860-ական թթ. պատմության հարցերի լուսաբանման համար Հորմուզդ Ռասամի ծավալով աշխատությունում<sup>28</sup> հարուստ նյութեր են բերվում անգո-եթովպական ճգնաժամի, հակաթեռողորոսյան ապատամ-բությունների, անգլիացիների և ֆեոդալ-իշխանների կապերի, անգլիա-ցիների եթովպական ներխուժման, Մագդալայի անկման, Թեոդորոս Բ-ի ինքնասպանության և այլ պատմական իրադարձությունների վերաբեր-յալ: Հենրի Բլանկը<sup>29</sup> հիմնականում անդրադառնում է Ռասամի նկա-րագրած իրադարձություններին, սակայն միաժամանակ հաղորդում է լրացուցիչ արժեքավոր տեղեկություններ, երբեմն էլ նոր նյութերով հարստացնում նրա հաղորդումները: Այդ առումով ուշագրավ են Մա-սառայից Դամոտ, այստեղից էլ Մագդալա տեղանքի և բնակավայրերի նկարագրությունը, ինչպես և այն նյութերի գգալի մասը, որ վերաբե-րում են հակաթեռորոսյան ապստամբություններին: Տարիներ անց, Պրիդոն շարադրել է Ռասամի գլխավորած առաքելության համառոտ պատմությունը, որը սակայն պատմագիտական լուրջ արժեք չի ներ-կայացնում: Կամերոնի հետ բանտարյին կյանքի դառնությունները ճա-շակած Կ. Տ. Բեկը և ուրիշներ հրատարակել են հետաքրքրական հուշա-գրություններ և այլն:

Հողանդ ու Հողիրի երկհատոր աշխատությունը<sup>30</sup> նվիրված է ան-գլիացիների գինված միջամտության պատմությանը: Նրանում մանրա-մասն նկարագրված է եթովպական ներխուժող բանակի կազմը, զորքերի ափհանումը Զովլա, նրանց ծավալած ուազմական և հետախուզական գործողությունները, Մագդալայի ճակատամարտը և այլն: Աշխարհա-գրագետ սպա Մարիսամի աշխատության<sup>31</sup> հիմնական բովանդակու-թյունը կաղմում է ներխուժող զորքերի գործողությունները և Զովլայից մինչև Մագդալա ձգվող երկրամասի նկարագրությունը<sup>32</sup>: Բլանֆորդը ուսումնասիրել է այդ երկրամասի ընդերքը և բուսական աշխարհը:

Տիմոթեոսի ուղեգրությունը բաղկացած է երկու բաժնից. առա-շինը վերնագրված է «Երկամեայ պանդխտութիւն ի Հապեշտան», որ-տեղ ժամանակագրական հաջորդականությամբ նկարագրված է նրա ուղևորությունը: Գրանցելով այն ամենը, ինչ տեսել ու լսել է, Տիմո-թեոսը նյութեր է կուտակել Ամհարայի քաղաքների ու գյուղերի, գյու-ղացիության վիճակի, հակաթեռորոսյան ապստամբությունների և այն իրադարձությունների վերաբերյալ, որոնք կապված են Տեսու Գորազեի, Վագշում Գորազեի, Տիգրեի մեծ իշխան Կասայի հետ և այլն: Երկրորդ բաժինը, որ վերնագրված է ռնկարագրի բարոյական, կրոնական և քա-ղաքական կենաց հապեշից», ունի երեք ենթարաժին, «Հապեշներուն

բնավորության նկարագիրը», «Հապեշներուն կրոնական նկարագիրը», «Հապեշտանի ներկա պատմությունն ու քաղաքական անցքերը», որոնց յում ի մի են բերված բազմազան նյութեր Ամհարայի վերաբերյալ: Առաջին ենթարաժնում նկարագրված են Ամհարայի բնակիչների առօրյա կյանքը, սովորությունները, բարքերը, նիստ ու կացը, ընտանեկան կյանքը: Երկրորդ ենթարաժնում ամբողջովին նվիրված է եթովպական եկեղեցուն և հոգևորականությանը: Երրորդ ենթարաժնում նյութեր են բերվում եթովպակայի «նախնական պատմության», Թեոդորոս Բ-ի և եկեղեցու հակամարտությունների, Եթովպակայի ժողովուրդների ու ցեղերի, նրանց լեզուների, հավատալիքների վերաբերյալ:

Հորմուգդ Ռասամի, Հոլլանդ ու Հոգիրի և մյուս հեղինակների հաղորդումների միջովկը կազմում են հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան եթովպակայում ծավալված իրադարձությունները, իսկ Տիմոթեոսը հաղորդում է Ամհարայում տիրող իրավիճակի վերաբերյալ: Նա համարյա չի խոսում կամ էլ երբեմն անցողակի հիշատակում է Ամհարայից դուրս տեղի ունեցած եղելությունների մասին:

Ինչպես Տիմոթեոսի, այնպես էլ այդ հեղինակների հաղորդումները կառուցված են բանավոր (Նրանց տեսածներն ու լսածները) և գրավոր աղբյուրների հիման վրա: Հորմուգդ Ռասամը և Հենրի թլանկը լայնորեն օգտագործել են անգլիական հետախուզության նյութերը, Թեոդորոս Բ-ի հետ բանակցությունների արձանագրությունները, կողմերի միջև փոխանակված նամակները, արումա Սալամայի հաղորդումները, Հոլլանդ ու Հոգիրը և Մարիսամը՝ Անգլիայի և Հնդկաստանի արխիվներում պահպանվող նյութերը, ներխուժման մասնակցած տարբեր գնդերի օրագրերը, սպաների զեկուցագրերը, գրառումները: Տիմոթեոսի ուղեգրությունը շարադրված է գերազանցապես բանավոր, մասամբ էլ գրավոր աղբյուրների նյութերի հիման վրա:

Գրավոր աղբյուրներ օգտագործելու անհրաժեշտությունը ծագել է նրանից, որ Տիմոթեոսը ցանկացել է եթովպակիտական ուսումնասիրության տեսք տալ ուղեգրությանը: Նա, ինչպես ինքն է ասում, փորձել է ոչ միայն նկարագրել իր ուղեղությունը, այլև «գրի առնուլ... երկրին բարոյական, կրոնական և քաղաքական պատմությունը»: Այդ ծրագիրը, սակայն, չէր կարող նույնիսկ մոտավոր շափով հրագործվել միայն նրա տեսածի ու լսածի հիման վրա: Նա գրավոր աղբյուրներից փոխառությունները ծառայեցրել է սեփական դիտարկումների ամրապնդմանը և շարադրանքի հենքում նկատված բացերի վերացմանը:

Դրանք սակայն որպակ չեն կազմում և թեկուղ նվազագույն շափով չեն մթագնում Տիմոթեոս-ուղեգրողի դեմքը:

Տիմոթեոսը շորս անգամ վկայակոչել է ԺՈ դարավերջի հայ աշխարհագրագետ Ստեփաննոս-Գյումբեր Ագոնցի<sup>33</sup> Աշխարհագրությունը՝ ուղեգրության համար համարյա կարևորություն կամ նշանակություն չոնքեցող հարցերի (Եթովպիայում տարածված որդախտի, սողոմույան թագավորության ծագման, Տանա լճի և այլն) կապակցությամբ։ Ուղեգրությունում օգտագործված են մի շարք փաստաթղթեր (Եսայի պատրիարքի կոնդակները, պետական քարտուղար Կլարենդոնի, Եգիպտոսի անգլիական հյուպատոսի տեղակալ Ստանլեյի և այլոց նամակները), որոնք լուս են սփռում Տիմոթեոսի ուղեւորության հետ կապված այս կամ այն հարցի վրա։ Տիմոթեոսը դիմել է նաև Աստվածաշնչին, մանավանդ այն դեպքերում, երբ խոսքը եթովպական եկեղեցու դավանության, ծեսերի և հոգևորականության մասին է։ Դրանով էլ սպառվում է վկայակոչված գրավոր աղբյուրների շարքը։

Տիմքեր կան կարծելու, որ Տիմոթեոսը ձեռքի տակ ունեցել և առանց համապատասխան տողատակի ծանոթագրության օգտագործել է նաև մի շարք այլ գրավոր աղբյուրներ։ Պատմելով բուդյաների մասին նա ասում է. «Ճարմանալի է, որ... այսլավի եկող գնացող եվրոպացիք ... մինչև ցայսօր և ոչ մեկը խոսած ու գրած (բուդյայության մասին) է յուր ուղեգրության մեջ։» Նա հաղիվ թե այդ կարգի դիտողություն աներ, եթե ծանոթ լիներ որոշ եվրոպական աղբյուրների։ Հավանական է, որ նրան անծանոթ չեն եղել Զեյմս Բրյուսի, Հենրի Սալտի այն ժամանակ լայնորեն տարածված աշխատությունները, սակայն դրանք, ավելի քան կեսդարյա հնություն ունենալով, չեն կարող, բացի ընդհանուր բնույթի տեղեկություններից, քիչ թե շատ կոնկրետ նյութեր մատակարարել ուղեգրությանը։ Չի բացառվում, որ Տիմոթեոսն օգտվել է եվրոպական մամուլի այն հաղորդումներից, որ վերաբերում են Կամերոնի և Մյուս եվրոպացիների արգելափակմանը։ Ավարտելով «Անգլիացի հյուպատոսն ու անոր բանտարկությունը» ենթագլուխը, Տիմոթեոսը նշել է. «Այս լուրերը մենք երուսաղեմ եղած ժամանակնիս լրագիրներու մեջ կկարդայինք ստույգն անստուգին հետ, և երբեմն հանդերձ շափազանցություններով։» Հավանաբար վերոհիշյալ ենթագլխի հիմքում ընկած են լրագրային ստույգ համարված ամփոփագրերից քաղվածքներ։

Այն դեպքում, երբ գրավոր աղբյուրները ուղեգրությանը տվել են այս կամ այն շափով լրացուցիչ, օժանդակ նյութեր, բանավոր աղբյուրների նյութերը՝ Տիմոթեոսի տեսածներն ու լսածները (անձնական տպա-

վորություններ, ականատեսների ու ականջալուրների պատմածներ, ժողովրդական զրուցներ ու առասպելներ և այլն) կազմում են նրա Հությունը:

Տիմոթեոսի ուղեգրության նյութերի գլխավոր աղբյուրը հասարակ ժողովրդն է: Ի տարրերություն «Եվոպացի բարձրաստիճան» ճանապարհորդների, նշել է Տիմոթեոսը, «մեր դիրքն ավելի ժողովրդային ըլլալով, դյուրամերձ էինք ամենուն... և իրու բում տեղացի ծանոթացնք անոնց [Եթովպացիների] ամեն բնավորությանց»: Ուղեգրությունում բերված են հասարակ մարդկանց հետ հանդիպումների, զրուցների վերաբերյալ բազմաթիվ փաստեր. Վոգերայում «երրեմն հարյուր, երրեմն ավելի անձինք» հատկապես կրոնավորներ, զրուցի էին նստում. Տիմոթեոսի հետ, թեևսայում, որտեղ նա զբաղվում էր «հոգեոր ու մարմնավոր բժշկությամբ», նրա մոտ հիվանդներ էին գալիս նույնիսկ հեռավոր վայրերից և այլն, և այլն: Ուղեգրությունը զգալի չափով պարտական է նաև Տիմոթեոսի հանդիպումներին ու զրուցներին Տեսու Գորազեի, Վագչում Գորազեի, Տիգրեի մեծ իշխան Կասայի, Զարամայի իշխանների, ս. Հակոբի նախկին սան Միքայել վարդապետի և այլ աշխարհիկ ու եկեղեցական գործիչների հետ:

Թե ինչպիսի լրջությամբ և բարեխղճությամբ է Տիմոթեոսը վերաբերվում հաղորդած նյութերի հավաստիությանը, երևում է հետևյալ փաստերից. նա լսածը տեսածից տարրերում է նշելով. «Կ'ըսեն», «Կ'ըսուի», «ինչպես իրենք կ'ըսեն», «Ազ պատմեն թե», «ինչպես որ կը զրուցվի», «ինչ որ լսեցինք», «Ժողովրդական վկայություն է» և այլն: Նա լսածի հավաստիությունը կասկածի է ենթարկում կամ պատասխանատվությունն իրենից հեռացնում հետևյալ խոսքերով. «առանց երաշխավոր ըլլալու ճշտության», «կա ըսին իրենք, բայց մենք չտեսանք», «թեպետ առասպել մը պիտի թվի», «պահ մը կասկածի կը տանի», «թեպետ մենք չենք հավատացած», «դատողությունն ընթերցողաց կը թողումք», «հայտնի առասպել մը ըլլալուն ամենկին տարակույս չկա»: և այլն:

Տիմոթեոսը հավաստում է, որ զանացել է «Ճիշտ տեղեկություններ», հաղորդել և հնարավորության սահմաններում ստուգել է ուրիշներից լսածները: Նա ասում է. «Մեր ժանոնթություններն Ամհարա երկրին մեջ թափառած ժամանակնիս ստացած և շատերու համաձայն վկայությամբ և մեր հետաքրքիր հետազոտությամբ ստուգած, և պատմածնուս մեծ մասն ալ մեր անձին փորձով իմացած և այնպես ի գիր արձանացուցած ենք»: Նա մինչև անգամ լսածներից զանց է առել «շատ բաներ ու

դեպքեր», որոնք «բացակա ժողովրդոց վրայոք» էին և «ստուգիլը դըմ-վար էր»: Այնուամենայնիվ ուղեգրությունը կարելի է երբեմն հանդիպել այնպիսի անհեթեթությունների, ինչպիսին է Եթովպիայի «մարդաշուն» բնակիչներին վերաբերող տեղեկությունը: Տիմոթեոսն ինքն էլ, կարծես, որոշ շափով հավատացել է լսածին, որ տղամարդիկ «կես մարդ, կես շուն» են հարավային Եթովպիայում:

Բանավոր աղբյուրների տարրեր բնույթի մեծաքանակ նյութերի անկաշկանդ օգտագործումը խոր կնիք է թողել Տիմոթեոսի ուղեգրության վրա: Նրանում կողք կողքի առկա են իրական-պատմական և ժողովրդական-վիպական տարրերը:

Տիմոթեոսը ձգտում է նմանվել միջնադարյան հայ մատենագիրներին, որոնք պատմական իրադարձությունները, նույնիսկ գիտական հարցերը շարադրել են գեղեցիկ ու պատկերավոր, բանարվեստի այն կանոնների համաձայն, որ մշակված էին վանական կրթության օջախներում: Նրանց երկերում հաճախ իրար հաջորդում են պատմականն ու ոչ պատմականը, իրականն ու առասպելականը: Միջնադարյան հայ մատենագրության ավանդույթներին հետևելու ձգտումից ծագում է ուղեգրության շարադրանքի գլխավոր յուրահատկությունը՝ իրադարձությունները ներկայացնելիս միահյուսել իրական-պատմական և ժողովրդական-վիպական տարրերը: Ուղեգրության այն հատվածները, որտեղ Տիմոթեոսը հաղորդում է սեփական աշխերով տեսածները, սեփական տպավորությունները հիմնականում իրական-պատմական են, իսկ ականջալուր իրադարձությունների և անցյալի մասին հաղորդումներում գերակշռում են ժողովրդական-վիպական տարրերը: Կան նաև այնպիսի հաղորդումներ, որոնցում առասպելները իմաստավորվում են ոբակս անցյալում կատարված եղելությունների իսկական պատմություն:

Այդ առումով բնութագրական է Եթովպիայի «Հրեշավոր թաղավորաց» պատմությունը, որի ներածականում Տիմոթեոսն ասում է. «Հապեշից ներկա քաղաքական պատմության ձեռք շղարկած, որ թեռդրուսի իշխանության ժամանակեն կսկսի, ավելորդ շեմ համարիր համառոտ տեղեկություն մը տալ հապեշից ազգային հին ավանդության մը վրա, որ իրենց նախնական պատմության կարևոր մեկ մասը համարված է. այն է Զանդո և Գրայն թագավորաց տիրապետությունը: Ապա ավելացնում է, որ Եթովպացիները «Գրայնեն հետո երրորդ հրեշավոր թագավոր կհամարին» Թեռդրոս Բ-ին: Իհարկե, անհեթեթ է

Զանդո-Գրայն-Թեղողորս զուգորդումը, սակայն, այդ գլուխների ներքո մատուցվում են արժեքավոր նյութեր:

Զանդոյի առասպելը եթովպական բանավոր բանահյուսության հնագույն նմուշներից է<sup>34</sup>: Տիմոթեոսուր, թեև իմացել է, որ այդ առասպելն առկա է նաև գրավոր աղբյուրներում (Զանդոյի «Վրայոք երկար պարագաներով գրվածք կան իրենց ազգային պատմության մեջ, ինչպիս կըսեն իրենք»), սակայն գերադասել է գրի առնել ժողովրդի բերնից լսածը, և, հավանաբար, նրա վերապատմածն առասպելի ամհարական տարրերակն է: Դժվար է ստուգությամբ որոշել, թե ինչ չափով են պահպանված ավանդական բանահյուսության տարրերը, սակայն այն գաղափարական ընդհանուր բովանդակությամբ եթովպագետ Բուշի տարրերակին նմանվելով հանդերձ, նրանից տարրերվում է արտաքին որոշակի հատկանիշներով: Բուշի տարրերակում<sup>35</sup> շար ուժերի հավաքական կերպար վիշապ-օձը կոչվում է Վայնաբա, իսկ բարի ուժերի մարդակերպ մարմնացումը՝ Անգարո, որը հանդես է գալիս որպես Սարա թագուհու հայրը և նրա նախորդն եթովպական գահի վրա: Վայնաբա վիշապ-օձն ապրում էր Աքսումի հարավակողմը գտնվող Տոմբեն գավառում, և երբ հայտնի է դառնում, որ այն դեպի Աքսում է շարժվում, Անգարոն քաղաքի բնակիչներին խոստանում է հրեշին սպանել, պայմանով, որ իրեն բարձրացնեն գահ: Նրանք համաձայնվում են: Անգարոն կախարդում է Աքսումի ճանապարհը, և այնտեղ թաղում երկաթե գործիքի կամ զենքի ձև ունեցող մի առարկա, որը կրակ է ժայթքում վիշապի վրա: Վայնաբան բոցերի միջից անցնելով հասնում է Աքսում, սակայն այնտեղ էլ մահանում է ստացած վերքերից<sup>36</sup>:

Ժողովրդական ստեղծագործություն է Գրայնի առասպելը, որի պատմական հիմքը եթովպական ժողովուրդների պայքարն է Գրայն կամ Զախլիկ վերանվանված իմամ Ահմետ ալ-Ղազիի հրոսակների դեմ: 1527—1549 թթ. ալ-Ղազին, հենվելով Կարմիր ծովի աֆրիկյան ափերում հաստաված թուրքական նվաճողների վրա, ոչնչացրել է այն տնտեսական ու մշակութային արժեքների զգալի մասը, որ եթովպիշայի ժողովուրդները ստեղծել էին դարերի ընթացքում: Նրա հռչակած սուլոր պատերազմից տարիներին կողոպտվեցին ու այրվեցին Դեբրա-Լիբանոսի, Լալիբելայի նշանավոր վանքերը, կոտորվեցին կամ բռնի կրոնափոխվեցին Հակիկ լճից մինչև Աքսում, Դեմքեա ընկած քաղաքների ու գյուղերի բնակիչները: Եթովպացիներին օգնության հասած «Ճերմակ մարդիկ» (ի դեպ պորտուգալացիներ, ոչ թե հույներ) բազմալիա՝ մարտերից հետո վերջ տվեցին ալ-Ղազիի ասպատակություններին: Այդ

պատմական եղելությունները, ևնթարկվելով ավանդական վեպի համար սովորական փոփոխությունների և առասպելականացման, ծնունդ են տվել Գրայնի առասպելին, որի բազմաթիվ տարբերակներից մեկն է Տիմոթեոսի վերապատմածը:

Մինչ առասպելներն ունեն դիցաբանական նկարագիր և պարունակում են զգալի փոխառություններ, ժողովրդական վեպն ընդհանուր առմամբ ազգային ինքնուրույն ստեղծագործություն է, որի նյութը նշանավոր անձանց ու եղելությունների պատմությունն է: Այդպիսին է «Երրորդ հրեշտավոր թագավորի» կամ Կասա-Թեոդորոսի վեպը, որի միշտ շարք դրվագներն առկա են Տիմոթեոսի ուղեգործության մեջ:

Եթովպական ժողովուրով, ինչպես նշել է Տիմոթեոսը, Թեոդորոս Բ-ին «անմահ և յուր անձը և մարմինը գերբնական զորության տեր կհամարեր, որուն համար կըսեին, թե ոչ սուր կրանի վրան, և ոչ գըտակ կդիպչի», և «հավանական է որ քանի մը դար անցնելեն հետո առասպելյալ դյուցազուններու կարգն անցնի Թեոդորոսն ալ յուր քաջագործություններով»: Արդեն բերներերան շրջում էին նրա սխրագործությունները գովերգող երգեր ու պատումներ: Ժողովրդական վիպասանները տարբերություն չէին զնում իրականի և երեւակայականի միջև, իսկ առասպելականն ու հրաշալին դուր էին գալիս ինչպես վիպողին, այնպես էլ նրա ունկնդիրներին: Դժվար է ասել՝ Կասա-Թեոդորոսի մասին իրարից անջատ ստեղծված երգերի ու պատումների հարակցումով մի ամբողջական, միասնական վեպ գոյացել էր, թե ոչ: Հավանարար ոչ, քանի որ դրանում որոշիչ դերը պատկանում է ժամանակին: Սակայն այն, ինչ Տիմոթեոսն է վերապատմել («Թեոդորոսի թագավորությունը», «Թեոդորոսի գովելի հատկությունները», «Թեոդորոսի բռնությունները» և այլն), մի բավական ամբողջական պատում է, որն ունի սկիզբ, զարգանում է և ավարտվում գլխավոր հերոսի՝ Թեոդորոս Բ-ի ինքնասպանությամբ: Ունեցել է Տիմոթեոսն արդյոք որևէ գրավոր աղբյուր Կասա-Թեոդորոսի վեպի համար, մեզ հայտնի չէ: Սակայն վեպի մի քանի դրվագները տարբեր ծավալով և տարբեր խմբագրությամբ գրի են առել նաև Վալդե-Մարիամը, Հենրի Բլանկը և ուրիշներ<sup>37</sup>, իսկ նույն դրվագի տարբերակների առկայությունը խոսում է այն մասին, որ Կասա-Թեոդորոսի վեպն ապրել, զարգացել է բերանացի և ինչպես այդ հեղինակները, այնպես էլ Տիմոթեոսն օգտվել են եթովպական բանավոր ստեղծագործության միանգամայն տարբեր ակումքներից:

Կասա-Թեոդորոսի վեպը, Եթովպիայի ֆեոդալական անցյալից ուազմաարկածախնդրական մի սովորական դրվագ հիշեցնելով հան-

դերձ, ոմի պատմական հիմք և գաղափարական նպատակասլացություն: Նրա միջավայրը պատմական է (Եթովպիայի ֆեռդալական հասարակությունը), պատմական են նրա գործող անձերը (Կասա-թեոդորոս, Ռաս Ալի, Վազգարո Մանան, արունա Սալամա, Կամերոն և այլն), և պատմաքաղաքական է նրա բովանդակությունը (սկզբում՝ պալքարը գալլա ֆեռդալների կեղեքիլ լժի, հետագայում՝ օտար զավթիչների ներթափանցման դեմ): Վեպի հերոսներից յուրաքանչյուրը հավաքական կերպար է (Ռաս Ալին՝ գալլա ֆեռդալների, արունա Սալաման՝ կղերի, Կամերոնը՝ օտար զավթիչների և այլն) և, ինչպես յուրաքանչյուրը ժողովրդական ստեղծագործության մեջ, նրանց գաղափարականացումը տրված է արարքների շափաղանցումով: Վեպում տեղ է տրված և Ամհարայի կեղեքված, ճնշված գյուղացիությանը, որը, համախմբվելով Կասա-թեոդորոսի շուրջը, պալքարում է գալլա ֆեռդալների լժից ազատագրվելու համար:

Տիմոթեոսի ուղեգրությունում կան բազմաթիվ մանրապատումներ, զրույցների, առասպեկների բեկորներ (գուշակություններ Կասա-թեոդորոսի և Վագզում Գորազեի մասին, Տեսու Գորազեի և Վագզում Գորազեի մենամարտը և այլն), հեթանոսական անցյալից ժառանգված հավատալիքներ և այլ ժողովրդական-վիպական նյութեր:

Տիմոթեոսի ուղեգրության իրական-պատմական նյութերը հիմնականում վերաբերում են սոցիալական, տնտեսական և քաղաքական այն իրավիճակին, որ 1867—1869 թթ. տիրում էր Ամհարայում: Սակայն շտիրապետելով պատմություն հորինելու վարպետությանը, նա արժեքավոր այդ նյութերը մատուցել է բավական խառը և համարյա անսիստեմ: Նա հաճախ պատմում է թոփշքներով՝ մեկ անցյալի մասին, մեկ ներկայի, մեկ գյուղացիների, մեկ եկեղեցական գործերի, հարկերի մասին խոսքը շավարտած վերադառնում է կիսատ թողած մի այլ հարցի, երբեմն էլ այլ բառերով կրկնում է այն, ինչ արդեն ասվել էր: Այդ կարգի ցրվածությունը խլացնում է նյութի հնչեղությունը, դժվարացնելով ուղեգրության օգտագործումը: Նրա նյութերի տեսակարար կշիռը ցույց տալու համար անհրաժեշտ է դրանք համախմբել և իմաստավորել համապատասխան հարցերի շրջանակներում:

Ուղեգրության տարրեր մասերում ցրված են զգալի քանակությամբ նյութեր, որոնք հարստացնում են մեր պատմագիտական իմացություններն ու փաստական գիտելիքներն ամհարական գյուղի ու քաղաքի, քաղաքային բնակիչների ու գյուղացիության և այլ բազմաթիվ հարցերի վերաբերյալ:

Ամհարայի առավել զարգացած շրջաններում վաղուց սկսվել էր աշխատանքի հասարակական բաժանումը: Առևտուրը և արհեստները, անշատվելով գյուղատնտեսությունից, կենտրոնանում էին նոր ձեւավորվող քաղաքներում, որտեղ հանգրվանում էին առևտրական քարավանները, կազմակերպվում էին տոնավաճառները և այլն: Սակայն ապստամբությունները, ներքին պատերազմները, գերեվարությունները, ասպատակությունները բացասաբար էին անդրադառնում ֆեոդալական հասարակության առաջընթացի, արտադրողական ուժերի զարգացման վրա: Տիմոթեոսի նյութերը խոսում են այն մասին, որ Ամհարայի քաղաքները, բացառությամբ մի քանիսի, թույլ դարգացած տնտեսական կենտրոններ էին, նրանց բնակչության զրադմոնքի մեջ գերակշիռ տեղ էր գրավում երկրագործությունը, գենես սուրբ հակադրություն շկար քաղաքի և գյուղի միջև: Սակայն բնակչության կազմով, արտադրական և փոխանակային հարաբերություններով, Ամհարայի ֆեոդալական քաղաքը հանդիսանում էր ավելի բարդ սոցիալական կառուցվածք ունեցող և նոր ներհակություններ պարփակող մի ամբողջություն:

Ուղեգրությունում առանձնապես լայն տեղ են գրավում այն նյութերը, որոնք բնութագրում են Ամհարայի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող աշխատավոր գյուղացիության վիճակը: Գյուղերը տեղադրված էին դժվարամատչելի վայրերում՝ խոր ձորերում կամ բարձրադիր լեռնադաշտերում, «վախնալով ապստամբներեն և գողերեն»: Որոշ վայրերում տարին երեք անգամ վարուցանք էր արվում, սակայն գյուղացիներն ապրում էին հետին թշվառության մեջ: Նրանց քրտնաշան աշխատանքի արդյունքը գնում-հաշում էր հարկերի ու պարհակների, կողոպուտի ու թալանի կաթսայում: Դյուլացիության հաշվին էին ապրում ոչ միայն իշխանները, ֆեոդալ-կալվածատերերը, պետական զանազան մակարույծները, այլև Թեոդորոս Բ-ի մեծաթիվ բանակը:

Տիմոթեոսը հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում դրամով ու մթերքով գանձվող հարկերի շափերի, հարկադրման ու հարկագնաման միջոցների, հարկը շվճարող գյուղացիների նկատմամբ գործադրվող պատժամիջոցների և, վերջապես, ամհարական գյուղը քայլայող կեղեգման ու ճնշման այլ ձեւերի մասին: Թշվառության մատնելված գյուղացիներն ամբողջ ընտանիքով ծառայության էին մտնում բանակում, տղամարդիկ կովում էին, իսկ «կանայք անոնց հացն ու կերակուլն» էին պատրաստում, «տղայք ալ զենքերն ու վահանն» էին կրում կամ կեր հավաքում գրաստների համար: Սակայն վերջին տարիներին գյուղերում այնքան քիչ էին վարուցանք անում, որ զինվորները ուտելու

բան չէին գտնում և խոշոր խմբերով անցնում էին Թեղողորս Բ-ի թշշ-նամիների կողմը:

Ամհարայի քաղաքային բնակչության հիմնական զանգվածը կազմում էր ստորին խավը: Մեծ թվով քաղաքացիներ զբաղվում էին հողագործությամբ՝ մշակում էին քաղաքում կամ նրա մերձակայքում գտնվող արտերը, այդիները, պարտեղները: Նրանք վերամշակում էին երկրագործական մթերքները, մեղրից ստանում էին մեղրագինի, որոշ բուլսերից՝ ձեթ, օճառ, դեղամիջոցներ, կորեկից՝ օղի, կաթից՝ մածում, սակայն չգիտեին պանիր պատրաստելու ձեզ: Արհեստավորների (ոսկերիշ, դերձակ, բրուտագործ, աղեղագործ և այլն) զգալի մասը կիսով շափ երկրագործ, անասնապահ կամ որսորդ էր, արհեստով զբաղվում էր տարվա որոշ ամիսներին, կատարելով սեզոնային պատվիրատուի կամ պատահական գնորդի պահանջարկը: Խոշոր թիվ էին կազմում նաև մանր առևտունականները, որոնք զբաղվում էին սննդամթերքի, մրգեղենի, բանջարեղենի, խմիչքեղենի և երկրագործական ու անասնապահական այլ ապրանքների մանրածախ առևտուվ:

Անհամեմատ ավելի ստվարաթիվ էին և մշտապես կարիքի մեջ էին գտնվում օրավարձով աշխատող սեագործ բանվորները, որոնց ծառայությունից օգտվում էին ինչպես ֆեռդալները, այնպես էլ բարեկեցիկ քաղաքացիները: Այդ ընշագուրկ զանգվածն այնքան մեծ էր և աշխատավարձն այնքան ցածր, որ յուրաքանչյուր քիչ թե շատ ունեող քաղաքացի պահում էր երկու սեռի տասնյակ ծառայողներ: Քաղաքային բնակչության ամենաաղքատ մասը, զուրկ լինելով ամեն ինչից, անգամ տուն ու տեղից և պատահական աշխատանքից, զբաղվում էր մուրացկանությամբ:

Տիմոթեոսը ճանաշողական նշանակություն ունեցող նյութեր ու տեղեկություններ է հաղորդում քաղաքների բնակչության սոցիալական սանդուղքի վերին աստիճանները կազմող իշխանների, ֆեռդալ-կալվածատերերի, զինվորականության և, հատկապես, հոգեորականության մասին, դասեր, որոնց ճոխ ու փարթամ կյանքի աղբյուրը հողային սեփականությունը, հարկերը և թալանն էին:

Տիմոթեոսի մի շարք հաղորդումներից երևում է, որ Ամհարայում օտար չի եղել քաղաքային դասերի պայքարը հանուն ինքնավարության՝ ֆեռդալական վերնախավի իշխանության դեմ և, որ նշանակալից է, քաղաքացիները որոշ տեղերում ձեռք էին բերել հարկային, դատական և ինքնավարական այլ ֆունկցիաներ:

Ամհարական քաղաքները, գտնվելով պետական ենթակայության

ներքո, կառավարվում էին արքունիքից նշանակված կառավարիչ-իշխանների («գլխավորի») կողմից: Կառավարիչը նշանակվում էր, ինչպես նշել է Տիմոթեոսը, «ամապատասխան քաղաքի «բնակչաց խընդրանոք», ընդ որում նրանք իրավունք ունեին ընդունել կամ մերժել առաջարկվող թեկնածությունը: Հաճախ քաղաքացիները, «երկու կողմից» բաժանվելով, պաշտպանում էին երկու տարրեր թեկնածուներ, երրեմն էլ որուրը մեկանց միաբանելով» նոր նշանակված կառավարչին կամ «զգողությանց ու գեղությանց» պատճառ դարձած նախկին կառավարչին հալածում էին «երկիրեն դուրս»: Անկասկած, կառավարչի նշանակման հարցում որոշակի դեր էր կատարում ցեղակցության ազդակը: Ցեղային ավագանու ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքի վարչատնտեսական կառավարմանը պայմանավորված էր քաղաքային դասերի տնտեսական դերի աճով:

Ամհարական քաղաքի ինքնավարության գործում կարևոր դեր ուներ ծերերի խորհուրդը: Նրա անդամները նշանակվում էին ազդեցիկ ու բարեկեցիկ հասուն տարիքի քաղաքացիներից և, որ ամենազլխավորն է, նրանց նշանակումը կատարվում էր ոչ թե պետական իշխանությունների, այլ քաղաքացիների կողմից: Ծերերի խորհուրդները գրադաւում էին համաքաղաքացիների միջև ծագած ամենատարրեր վեճերի կարգավորումով, «այն բոլոր դատական գործերով», որոնցում չկարարյան հարց<sup>38</sup>: Սակայն ծերերի խորհուրդները հաշտարար դատավորի դերից բացի կատարում էին նաև այլ փոնկցիաներ, որոնց մասին Տիմոթեոսը հաղորդում է արժեքավոր տեղեկություններ: Նա հավաստում է, որ խորհուրդները կարևոր դեր էին կատարում պետական հարկերը հավաքելու վերաբերյալ թագավորական հրամանի կատարման գործում<sup>39</sup>, իսկ պատերազմի ժամանակ նրանք էին բանակցում թշնամու հետ, նրանց որոշումով էր քաղաքն անձնատուր լինում կամ շարունակում կորիվը և այլն<sup>40</sup>:

Քաղաքային ինքնավարության ցուցանիշ էր նաև քաղաքացիական դատարանի առկայությունը: Դատերը լսվում էին հրապարակով, ներկա էին լինում ամբաստանյալը, ամբաստանողը, դատավորը կամ դանիան և քաղաքացիները: Եթե դատավորը, որն ընտրվում էր տեղում հավաքած բազմության միջից, չէր կարողանում «կողմերն իրավախոհ ընել», հաշտեցնել, ապա դատը հղվում էր «մեծ իշխանին կամ թագավորին ատյանը»: Իհարկե, քաղաքացիական դատարանը ծառայում էր իշխող դասերի շահերին, սակայն քաղաքի զարգացմանն համընթաց հաշվի էին առնվում նաև քաղաքային վերնախավի շահերը, և մասամբ

սահման էր դրվում իշխողների կամայականություններին բնակչության ստորին խավերի նկատմամբ Ամհարայում ներքին մաքսատների առկայությունը ևս խոսում է քաղաքային ինքնավարության մասին:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ուղեգրության այն նյութերը, որ պատմում են 1867—1868 թթ. Ամհարայում տեղի ունեցած հակաթեոդորոսյան ապստամբությունների, այդ շարժումների ղեկավար Տեսու Գորազեի, Վագշում Գորազեի և այլ պատմական դեմքերի մասին:

Թեոդորոս Բ-ի հզորության թուլացմանն զուգընթաց ապստամբ իշխանները բաժան-բաժան էին արել Ամհարան: Տեսու Գորազեն տիրում էր Վոլկահիդում և Վոգերայում, Վագշում Գորազեն՝ Լաստայում, Դաճազմալ Էնինեն՝ Թելեսալում և այլն: Անգլիացիների ներխուժումից հետո, երբ թեոդորոս Բ-ը ստիպված Մագդալա քաշվեց, ապստամբ իշխանները զենքերը դարձրին միմյանց դեմ: Վագշում Գորազեն հաղթեց նախ Էնինեին, ապա Տեսու Գորազեին և, տիրելով ամբողջ Ամհարային, իրեն հոշակեց Եթովպիայի թագավոր Տեկլա Գիորգիս (1868—1871) անվանումով:

Այդ պատմական դեմքերի և իրադարձությունների վերաբերյալ Տիմոթեոսը հաղորդում է մեծ մասամբ ականատեսի վկայություններ: Առանձնապես հետաքրքրական են նրա հաղորդումները Զելգայի գավառի և Զար-ամբայի շուրջը ծավալված ուազմական գործողությունների մասին: Նա բավկան մանրամասն նկարագրել (հավանաբար միակ նկարագրությունը) է Զար-ամբայի տեղագրությունը, նրա ռազմական նշանակությունն ու պաշտպանական միջոցները, ներքին կյանքն ու «կառավարության եղանակը», պաշարումն ու հանձնման բանակցությունները, պաշտպանների փախուստն ու Տեսու Գորազեի զորքերի ներխուժումը, վերջինիս հանդիսավոր մուտքը Զար-ամբա և այլն: Տիմոթեոսը գրի է առել Տեսու Գորազեի հետ ունեցած բազմաթիվ հանդիպումներն ու զրուցները, նրա նվաճումներն ու հերոսական վախճանը:

Տիմոթեոսը, գտնվելով Վագշում Գորազեի զորակայանում, հանդիպումներ ու զրուցներ է ունեցել ոչ միայն նրա, այլև նրա մերձավորների հետ, և կուտակել է բավկական հարուստ նյութ: Նա նկարագրել է Վագշում Գորազեին («նիհար և ճողած մարդ մըն էր, բայց մտոք զորավոր, հնարագետ և սրտով արի»), նրա զորքերին («միհստ քաշ, ճարպիկ ու պատերազմաներ» համաերկրացիներին), տեղեկություններ հաղորդել նրա մղած կոկվների ու նվաճումների, եկեղեցականության հետ ունեցած դժվարությունների մասին, բնութագրել նրա հարկային քաղաքականությունը, արտաքին կապերը, քաղաքական նա-

խասիրությունները։ Տիմոթեոսը վկայում է, որ նա սկզբում օգնել է անգլիացիներին, սակայն թագավոր հոչակվելուց հետո հրաժարվել է գործիք դառնալ նրանց ձեռքում և, ձգտելով պաշտպանել Թեոդորոս թւի ստեղծած պետությունը, զենքերը դարձել է կենտրոնախույս ֆեոդալների դեմ։ Այդ վկայությունները կարող են նոր լույս սփռել Վագջում Գորազեի կամ Տեկլա Գիորգիսի կենսագրության վրա, որի մասին մեզ հասել են շատ հակասական կարծիքներ։

Ուղեգրությունում կան նաև Տիգրենի մեծ իշխան Կասայի կամ Եթովպիհայի ապագա Յոհաննես Դ թագավորի (1871—1889) անձի, գործի և անգլիացիների հետ նրա կապերի, Եթովպական արքունիքի և եկեղեցու հակամարտությունների, աշխարհիկ ու հոգևոր ականավոր ֆեոդալների վարքագծի, Եթովպիհայի ֆեոդալական միջավայրի, սոցիալական հարաբերությունների, տնտեսական կյանքի և այլ բազմաթիվ հարցերի վերաբերյալ իրական-պատմական նյութերով կառուցված հաղորդումներ։

Այսպիսով, իրական-պատմական և ժողովրդական-վիպական նյութերի առկայության պայմաններում, Տիմոթեոսի ուղեգրությունը ներկայացնում է և պատմագիտական, և գրական արժեք։ Նրա գրական ամենապիշտվոր արժեքը կայանում է նրանում, որ Տիմոթեոսը լայնորեն օգտվել է ամհարական բանավոր բանահյուսությունից, գրի առել ժողովրդական ստեղծագործության նմուշներ։ Ուղեգրության պատմագիտական արժեքը պայմանավորված է այն խորքով ու լայնքով, որով ընկալվում է Ամհարայում տիրող սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավիճակը՝ Թեոդորոս թ-ի վերջին տարիներին։

Տիմոթեոսը, որպես մտածող, հոգևոր դասի ներկայացուցիչ է, և դա որոշում է նրա պատմագիլիսոփիայությունը։ Նրա աշխարհայեցողության հիմքը կազմում է «բանն» (logos) աստվածային նախախնամությունը («ի սկզբանէ էր բանն եւ Աստուած էր բանն»)։ Աշխարհը ստեղծվել է աստծու կողմից և ամեն ինչ ենթարկվում է նրա գերբնական զորությանը։ Աստծու կամքով են կատարվում բնական երեւույթները՝ երկրաշարժ, կայծակ, մահ, սով, առատություն և այն, և աստվածային կամ «վերին նախախնամությունն» է շարժում մարդկային։ Հասարակության պատմության անիվը, հասարակական կյանքում պահպանում կամ խանգարում կարգ ու կանոնը, բռնկում կամ հանգնում պատերազմները, գահ բարձրացնում կամ գահընկեց անում արքաներին, վարձատրում կամ պատժում մարդկանց և այն։ Մարդկային

կյանքը լոկ նախադուռն է դեպի ոչ երկրային, նլութական աշխարհից վեր գտնվող «հանդերձյալ աշխարհին», որի հավիտենական երանությանը կարող են արժանի լինել միայն «ճշմարիտ քրիստոնյաները»։ Սակայն պետք է միաժամանակ նկատել, որ Տիմոթեոսը հոգևորականության այն ներկայացուցիչներից էր, որոնք արդեն համարյա տեսնում էին, որ գիտության զարգացման շնորհիվ այդ կրոնական դոգմաներն աստիճանաբար կորցնում են միջնադարյան վառ գույները, և որ հասարակական միտքը ձգտում է ավելի ու ավելի խորամուխ լինել ոեալ աշխարհի ու մարդկային հարաբերությունների մեջ։

Տիմոթեոսը թեև կույր հավատով չի ընդունում դոգմաները և, որ առավել կարևոր է, դրանց նկատմամբ հաճախ ցուցաբերում է կասկած ու անվստահություն<sup>41</sup>, սակայն հիմնականում հավատարիմ է կրոնական աշխարհայեցողությանը և քրիստոնեական բարոյականության ըսկը գրունքներին, որոնցով էլ պայմանավորված են նրա սուբյեկտիվ գնահատականները եթովպական ժողովուրդների բարոյական վարքագծից Անգլիայի գաղութային քաղաքականության և այլ հարցերի վերաբերյալ։

Տիմոթեոսը գտնում է, որ Եթովպահայում քրիստոնեությունն աղճատվել է, և եկեղեցին այլևս ի վիճակի չէ կատարելու իր քրիստոնեական առաքելությունը (այդ մտքերը կարմիր թելի նման անցնում են ամրող ուղեգրության միջով): Եթովպական եկեղեցու գլուխը՝ ապօնա Սալաման ընշաքաղց է, խարդախ և դավադիր, նրա ստորադասները տղետ են, ծուլ, անառակ և սիրենց անարժան վարքով ու ընթացքով անպատիվ եղած են ժողովուրդոց առջև։ Գողովթյունը, ստախոսությունը և խարերայությունը» նրանց «երկրորդ բնությունն» է: Ինչպես եկեղեցականները, այնպես էլ աշխարհականները՝ «մեծամեծներից» մինչև հասարակ մարդիկ չեն հնազանդվում «քրիստոնեական օրինաց», անձնատուր են եղել անցավոր աշխարհի վայելքներին և ապրում են զեխ ու անբարոյական կյանքով։ Տիմոթեոսն ասում է. «Եթե կուզե մեկը շրջեղեղեն առաջ մարդկային ցեղի բարուց ապականյալ վիճակը երևակայիլ իբր ի պատկերի, թող հապեցից երկիրը երթա, ուր կարծես թե քրիստոնեության անոնք ի նախտինս սուրբ ավետարանին կհիշվի»։

Սոցիալական աղետների պատճառը որոնելով մարդկանց հոգեկան պայմանների, մոլորությունների և բարոյական արատների մեջ, Տիմոթեոսը բավական երկար կանգ է առել բարքերի անկման (անհյուրընկալություն, ապերախտություն, գողովթյուն, շնություն, պոռնկություն, մարդասպանություն և այլն) նկարագրության վրա, սակայն ամենազարմանալին այն է, որ նա լրջորեն փորձում է ցույց տալ, որ այդ-

արատներով տառապում է Եթովպիայի ողջ քրիստոնյա բնակչությունը, և «քրիստոնեական օրինաց» ճանապարհոց խոտորելու հետևանք են մեկը մյուսին հաջորդող ապստամբությունները: Տիմոթեոսի ասելով, ժողովորդը փոխանակ Թեոդորոս Բ-ին ճնազանդելու և «օրհնություններով ու զոհողություններով» իր երախտագիտությունը հայտնելու նրան ինչպես որդին հորը, ձգտում է «աթոռեն վար առնուլ ոինքը», իսկ վերջինս ստիպված է «ակամա բռնություն ձեռք առնուլ և անոնց հետ ոչ ևս իրրև հայր, այլ իրրև անաշառ դատավոր և իրրև դահիճ վարվիթ»: Երբ գյուղացիները շտոկալով ծանր հարկերին ու կեղեքուններին ապստամբություն են բարձրացնում, ապա դա Թեոդորոս Բ-ի նկատմամբ նրանց «ապերախտության» արտահայտությունն է: Հանուն «քրիստոնեական օրինաց», Տիմոթեոսն արդարացնում է ոչ միայն Թեոդորոս Բ-ի բռնությունները, այլև Անգլիայի ներխուժումը Եթովպիա:

Տիմոթեոսն Անգլիան համարում է «կրոնական ազատության» ախոյան՝ և պաշտպանում է նրա գաղութատիրական շահախնդրությունները, դրանցում պարզամտորեն տեսնելով քրիստոնեության գոյատեման երաշխիքը Եթովպիայում: Նա հավատացած է, որ այլակրոն ու անկրոն ժողովուրդների օվկիանոսում որպես միայնակ կղզի ընկած Եթովպիայում կործանման օրհասական վտանգ է սպառնում քրիստոնեությանը, իսկ Եթովպական եկեղեցին այնքան է հեղինակազրկվել, որ անընդունակ է որևէ դեր կատարել այդ վտանգը հեռացնելու գործում: Անզոր է նաև թագավորը, որը խճճվել է ապստամբությունների մեջ: Այդ դեպքում ո՞ւ ազնությանը ապավինել երկիրը քառային վիճակից դուրս բերելու և «քրիստոնեական օրինաց» համեմատ կառավարելու համար: Տիմոթեոսը որպես փրկության լաստ մատնացուց է անում Անգլիային, և շանք լի խնայում նրան առաքինության բոլոր գույններով զարդարելու համար: Նա հավատացած է, որ «անգլիացիները հավատու դեմ բնավ շեն պատերազմիր, իրենց կրոնական սկրդումքն է ազատությունը, վասն որո շեն հաճիր բնավ որևէ ազգի մը կրոնքը բռնաբարել և այն: Մոռանալով անգլիական ոինքամբ միջամբ տուլթյունը և դրա ծանր հետևանքները, Տիմոթեոսն ասում է, որ անգլիական «տերությունը բռնությամբ գործ տեսնել շուղեր, այլ ինչ որ կընե սիրով և իմաստությամբ է»: Նրա կարծիքով, անգլիացիներն Եթովպիա են մտել «առանց աշխարհակալություն ընելու մտօք» և նրանց «անշահասէր ընթացքը» կարող է նպաստել երկրի բարդավաճմանը:

*Եղբակացնենք. Միմոթեսի ուղեգրությունը ուրույն տեղ է գրավում՝ Եթովպիայի նոր պատմության օտար աղբյուրների ընտանիքում։ Նրա Հաղորդումներն էապես վերաբերում են Հորմուզդ Ռասամի, Հենրի Բլանկի, Հոլլանդ ու Հոգիրի և մյուս հեղինակների տեսադաշտից համարյա ամբողջովին դուրս մնացած Ամհարայի ներքին կյանքին և, որ ամենակարևորն է, նոր փաստերով, երբեմն էլ արդեն հայտնի փաստերի նոր մեկնարանությամբ հարստացնում են մեր պատկերացումն այն պատմական իրադարձությունների մասին, որոնցով նշանավորվեց անգլիացիների Եթովպիա ներխուժումը և Թեոդորոս II-ի պետության կործանումը Ամհարայում։ Եթովպիայի 1860-ական թվականների պատմության հարցերն ուսումնասիրողները չեն կարող անտարբեր անցնել Տիմոթեսի ուղեգրության կողքով։*

## О. ТОПУЗЯН

### ПУТЕВЫЕ ЗАМЕТКИ ТИМОТЕОСА САПРИЧЯНА КАК ИСТОЧНИК ПО ИСТОРИИ ЭФИОПИИ XIX В.

#### Резюме

Благодаря многовековым армяно-эфиопским традиционным связям возникли ценные армянские источники об Эфиопии, которые, однако, в силу своей недостаточной изученности еще мало используются в науке. Один из таких источников—пространные путевые записи Тимотеоса (Тимофея) Сапричяна (1822—1909 гг.) «Двухлетнее странствие по Абисинии». Записи Тимотеоса представляют огромный интерес для эфиопистики. Однако имеющиеся переводы этого произведения на французский и немецкий языки не привлекли к себе внимание ученых; их заслонили путевые записи таких авторов, как Ормузд Рассам, Генри Бланк, Холанд и Хозиер, изданные одновременно с переводами работы Тимотеоса. Между тем труд Тимотеоса выгодно отличается от трудов названных авторов более широким хронологическим и географическим охватом материала. В центре сообщений Тимотеоса—описание исторических событий, ознаменовавших падение государства, созданного царем Эфиопии Теодоросом II. Посещение Тимотеосом Эфиопии совпало с периодом английской экспансии в эту страну в 1867—1868 гг. Ему было поручено вручить Теодоросу II (1855—1868 гг.) послание—ходатайство армянского патриарха в Иерусалиме Исаи (оно было написано по предложению

английского Форин Офиса) об освобождении задержанного в Магдале английского консула Камерона и некоторых его сотрудников. Попав в плен к восставшим феодалам, Тимотеос почти два года (1867—1869 гг.) жил в Амхаре. Он собрал самые различные по характеру сведения об этом kraе, которые и составляют содержание его путевых записей.

Отличительной их чертой является то, что в них сочетаются реально-исторические и народно-эпические материалы. Исторически достоверно написаны те разделы, где автор выступает в качестве очевидца и излагает личные впечатления. В сведениях о минувших событиях и деятелях доминируют народные предания. Характер изложения порой напоминает исторический роман. В силу этого труд Тимотеоса наряду с историографической представляет также литературную ценность.

Его литературное достоинство заключается в том, что Тимотеос широко использовал устное народное творчество Эфиопии. Ценны его записи легенды о Зандо, Гране и, особенно, эпизодов из народного сказания о Касе-Теодоросе, отдельные части которого в других редакциях приводятся в хрониках Уольде-Марьяма, Зэннэбэ. Неизвестно, имел ли Тимотеос под рукой письменные источники об этом сказании. Однако существование различных вариантов одного и того же сюжета свидетельствует о том, что сказание о Касе-Теодоросе бытовало в устной форме и авторы пользовались разными источниками. Однако главное достоинство записей Тимотеоса, безусловно, заключается в сведениях исторического характера. Его сообщения о неизвестных ранее исторических событиях или новое толкование уже известных ранее событий обогащают наши знания о последних годах правления Теодороса II в Амхаре. Особую ценность представляют описания исторических событий, связанных с Тасоу Гобэзэ, Вагшумом Гобэзэ, ставшим впоследствии императором Тэкле Гийоргисом, данные о Касе, будущем императоре Иоханнисе IV.

В записях Тимотеоса, слабо владевшего искусством изложения истории, отсутствует систематизация материала, полнота охвата. Такие важные стороны жизни, как налоговое обложение, деятельность советов старейшин, борьба городских сословий против феодалов и другие, почти совсем не затронуты. Тимотеос принадлежал к духовному сословию. Однако, будучи довольно способным и развитым человеком (знал несколько языков, в их числе древнеэфиопский, читал европейскую литературу и пр.), он не всегда принимал религиозные догмы, часто выражал свое сомнение и недоверие к ним. Вместе с тем он оставался верным религиозному мировоззрению и тем нормам морали и права, на которых зиждилось феодальное общество.

1. «Երկամեայ պանդխտութիւն ի Հապէշստան, կամ բարոյական, քաղաքական եւ կրօնական վարք Հապէշից», յօրինեց Տիմոթէոս Սափրիշեան Կոստանդնուպոլսեսից, ի միաբանութենէ ա. Երուաղէմի, առաջին և երկրորդ գիրք, Երուաղէմ, ի տպարանէ առաքելական Աթոռոյ ա. Ցակովրեանց, 1871:

2 Deux ans de séjour en Abyssinie ou vie morale, politique et religieuse des Abyssinens par le R. P. Dimothéos, légat de sa Béatitude le patriarche arménien auprès de Théodore roi d'Abyssinie, traduit par ordre de sa Béatitude Monseigneur Issale, patriarche arménien de Jérusalem. Typographie arménienne du couvent de Saint-Jacques, Jérusalem, 1871.

Zwei Jahre in Abyssinien oder Schilderung der Sitten und des staatlichen und religiösen Lebens der Abyssiner von Sr. Hochw. Pater Timotheus, Legat Sr. Eminenz der Armenischen Patriarchen bei König Theodor von Abyssinien. Armenische Bibliothek. Herausgegeben von Abgar Joannissiany, Leipzig.

Ուղեգրության անգերեն թարգմանությունը, որը նվեր է ուղարկվել Անգլիայի Վիկտորյա թագուհուն, մասեղ է անտիպալ:

3 Մի շարք հեղինակներ անգրադաձել են Տիմոթեոսի ոչ թե ուղեգրությանը, այլ նրա ուղեգրությանը: Նրանք պարզապես վերաշարադրել են ուղեգրության այն մասերը, որ նրանց թվացել է կարևոր հայ-եթովպական հարաբերությունների տեսանկյունից: Դրանք են 3. Հ. Մալեզյանը («Ֆերիապատիկ» Խաչակր եպիսկոպոսի եւ արքանապատիկ) Տիմոթէոս վարդապետի Հապէշստան ուղեւորութեան պատմութիւնը, տե՛ս, «Մասիս», 4. Պոլիս, 1869, № 182, 1870, № 407: Որոշ հապավումներով պրտատպվել է էջմիածնի «Արարատ» ամսագրում, տե՛ս 1869, № 6, էջ 146—149, 1870, № 9, էջ 183—185): Մինաս Նուրիջանը (Ժամանակակից պատմութիւն 1866—1878, հատոր 4, Վենետիկ, 1907, էջ 46): Մաղաքիա Օրմանյանը (Ազգապատում, մասն երրորդ, 1808 տարին մինչև 1909, տպարան սրբոյ Հակոբյանց՝ Երուսաղեմ, 1927, էջ 4123—4138): Տ. Հ. Պ. Սավալանյանը (Պատմություն Երուսաղեմի, երրորդ հատոր, տպարան սրբոյ Հակոբյանց, Երուսաղեմ, 1931, էջ 1132—1155): Թյուզանդ Նդիայանը (Հայ կաթոլիկ և ավետարանական հարանվանությանց բաժանումը Ժի դարում, Անթիլիաս—Լիբանան, 1971, էջ 303—304) և ուրիշներ:

4 Հորմուդ Ռասամը ծագումով հայ էր («Սիրոն», Երուսաղեմ, 1867, № 4, էջ 49): Այդ հանգամանքը հավանաբար ոչ անկարևոր գեր է կատարել Եթովպիա ուղարկող այց պատվիրակության գուփ նշանակվելու գործում: Լինելով ոչ միայն քաղաքական գործիչ, այլև գիտնական, Ռասամը 1897 թ. Թոփրաք-Կալեսմ (Վան) հնագիտական պեղումներ է կատարել անգիտական հյուպատոս Կելյոտնի և ամերիկյան միսիոներ Ռեյնոլդսի հետ: Նրա գոյին են պատկանում մի շարք գիտական աշխատություններ:

5 Տիմոթեոսի ուղեւորությունը մեծ հետաքրքրություն է առաջացրել ինչպես հայ, այնպես էլ օտար քաջաններում: Երուսաղեմի Հայոց վանքի պաշտոնաթերթ «Սիրոն» ամսագրում նրա ուղեւորության վերաբերյալ հրապարակված յուրաքանչյուր նյութ անհապաղ արձագանք էր գտնում զրեթե բոլոր հայկական կարևոր թերթերում: Ստորև դրանցից մի քանիսը. 1. «Ֆերիապատիկ» Խաչակր սրբազն արքեպիսկոպոսի եւ արքանապատիկ Տիմոթէոս վարդապետի ուղեւորությունն դէպ ի Հապէշստան («Սիրոն», 1867, № 4, էջ 49—54): 2. Գերիապատիկ» Խաչակր սրբազն արքեպիսկոպոսի եւ իւր

ուղեկցաց ի Սոլէդ հասնիլը» («Սիրն», 1867, № 3, էջ 72—74): 3. «Երկրորդ նամակ գերբապատի» Խսահակ սրբազն արքեպիսկոպոսի ի Զիղղայէ» («Սիրն», 1867, № 6, էջ 89—90): 4. «Երրորդ նամակ գերբապատի» Խսահակ սրբազն արքեպիսկոպոսի ի Սուտակինէ» («Սիրն», 1867, № 8, էջ 121—122): «Սիրնը» հրապարակել է նաև այն նամակները,որ Վիկտորյա թագուհու «Հրամանաւա Անգլիայի արտաքին գործերի մինիստրությունը հղել է Խոայի պատրիարքին Տիմոթիոսի ուղարկության կապակցությամբ» («Սիրն», 1870, № 5, էջ 70 և 1872, № 7, էջ 156):

6 «Սիրն», 1867, № 4, էջ 49:

7 Record of the Expedition, vol. I, p. 51.

8 Նույն տեղում, էջ 330—331:

9 Մ. Օրմանյան, Հայոց եկեղեցի, էջ 102—103:

10 Տարրեր ժամանակներում մի շարք բարձրաստիճան հայ եկեղեցականներ, այդ թվում Կոստանդնուպոլիսի Հայոց պատրիարք Մ. Օրմանյանը պարզեարվել են եթով-պական շքանշաններով:

11 «Սիրն», 1867, № 4, էջ 49:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում:

14 Տիգրան Հ. Խ. Սավալանյանց, Պատմություն Երուսաղեմի, հ. 2, էջ 1152—1153:

15 Նույն տեղում, էջ 1154:

16 «Սիրն», 1867, № 4, էջ 49:

17 Հաստ Երուսաղեմի պատրիարքարանի պաշտոնաթերթի, պատրիարքը Եգիպտոս է զնացել Հայկական «եկեղեցյաց այցելություն ընկույն նպատակով»: Խարկե, այդ այդպես չէր: Ալեքսանդրիայում պատրիարքը շոգենավից նավամատուցյ է հասել «Կառավարության կողմեն խրկված ութ գույք թիվով նավ նստած և ուրիշ տասնի շափ նավակներու ուղեկցությամբ»: Այնտեղից «Պարձյալ կառավարության կողմեն պատրաստված քառաձի կառքն նստելով և ուրիշ քսանի շափ կառքերու ընկերակցությամբ» առաջնորդվել է եկեղեցի: Նրա կառքի առշեփց զնում էին «30-ի շափ ոտնավար և 60-ի շափ ձիավոր զինվորք» և այլն («Սիրն», 1867, № 7, էջ 105—106):

18 Այդ կոնդակում Եգիպտոսի խոփվը ներկայացված է որպես մի գործիչ, որը թեոգորոս II-ի նկատմամբ տածում է բարեկամական սրտարություն սիրո գեացումներ և ցանկանում թիովպահիան տեսնել խաղաղ ու բարդավան վիճակում: Իրո նրան «ցավ մի» է, որ Անգլիան «պատերազմ հրատարակեց, և թիովպահյի դևմ մեծ արշավանք ու բազմաձեռն բանակ մի խրկեց» ու թիովորությ «պիտի ստիպվի պատերազմելու, արյուն թափելու»: Ճիշտ է, թիովպահն ունի զորություն և մեծ կարողություն օտար հարձակման դեմք, սակայն լի կարող վերջնական հաղթանակ հռուսալ, քանի որ Անգլիան, «մյուս քրիստոնյա մեծ տիրությանց հետ բարեկամական հարաբերություններ ունենալով, կրնա օգնություն գտնելը և այլն» Վերջում պատրիարքը խորհուրդ է տալիս ազատ արակել կալանավորներին «մեծ արշավանքի գեց հետևանաց առաջքն առնելու» համար:

19 Record of the Expedition, vol. I, p. 42.

20 Նույն տեղում, էջ 44:

21 Նույն տեղում, էջ 44—45:

22 «Սիրն», 1867, № 12, էջ 189:

23 Տիմոթիոսն ազատ օգուվում էր Թուրքերեն, արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն լեզուներից, մասամբ էլ ամհարերենից: Վերջինին մասին նա բազմից հիշատակել է

Ազեղքության մեջ: Մի տեղ՝ նա ասում է. «Ես... կըսեի Ամհարայի լեզվով,—Զեր իշխաններն համբերություն ստվորեցեք, տեսեք, ինչպես հանդարտ կդիմենք և ալին: Մի այլ տեղ նա նշել է, որ ինքը եթովպացի կրոնավորների հետ զրուցներ էր ունենաւմ և խոսելով հետերին իրենց լեզվով: Տիմոթեոսն ամհարերեն ոչ միայն խոսում, այլև ինչ-որ շափով գրում էր: Նա ասում է. «Ես քիչ-շատ հապեշերեն տառերը ճանչալու մելուն հեղել կուտայի գրվելիք տառերը, և ես կնշանակեի մեքենայաբար, բայց կարողաց իմացնել անով (նամակով—Հ. Թ.): մեր ով և ուր ըլլալնիսօ:

24 Մ. Աղավենինի, Միարանք և այցելուք, էջ 509:

25 Նույն տեղում, էջ 441:

26 Տիգրան Հ. Թ. Սալլանեյանց, Պատմություն երրուսաղեմի, 4. չ, էջ 1154:

27 Նույն տեղում, էջ 1155:

28 Narrative of the British Mission to Theodore, King of Abyssinia, with notices of the countries traversed from Massowah, through the Soudan, the Amhare, and back to Annesley Bay, from Magdala, by Hormuzd Rassam, in two volumes. London, 1869.

29 Ma captivité en Abyssinie, avec des détails sur l'empereur Théodoros, sa vie, ses moeurs, son peuple, son pays, par le Dr. H. Blanc, traduit par Arbousse-Bastide, Paris, 1870.

30 Record of the Expedition to Abyssinia, compiled by order of the secretary of state for war, by Major Treveren J. Holland, C. B. Bombay staff corps and captain Henry M. Hozier, 3rd Dragoon guards, under the direction of colonel sir Henry James..., 1870, vol. I and II.

31 A History of the Abyssinian Expedition, by Clemand R. Markham, with a chapter containing an account of the mission and captivity of Mr. Rassam and his companions by Lieutenant W.-F. Pridgeaux, Bombay, staff corps 1889.

32 Այս ժամանակաշրջանի վերաբերյալ կան նաև մի շարք եթովպական ալբյուրներ, որոնցից հատկապես պետք է նշել Զաների ամհարերեն բնագիրը (E. Littman, The Chronicle of King Theodore, New York and Leipzig, 1902. իտալերեն թարգմանությունը Martino Mozeno, La cronaca di tre Teodoro. Attribuita al d'abtara Zaneb\*, Rassegna di studi Etiopici, II, 1942). Վալդե Մարիամ (C. Mondon-Vidallet, Chronique de Theodore II, Paris, 1905), Անանունի (Luigi Fasella, La cronaca dell'Imperatore Teodosio II di Etiopico in un manoscritto Amarico. Annali dell'Istituto orientale di Napoli, VI—VIII, 1957—1959) ժամանակաշրջանիները: Տիմոթեոսի ուղեգործությունից քսան-երեսում տարի հետո միայն խմբագրված այդ աղբյուրների քննարկումը լի մտնում մեր խնդրի մեջ, թեև, ելնելով շարադրվող հարցերի պահանջներից, գրանց հաղորդումներին ևս անդրադարձել ենք այս կամ այն շափով:

33 Ս. Գ. Ազնաց, Աշխարհագրություն Հորից մասանց աշխարհի, Ափրիկե, Վենետիկ, 1802:

34 Զանդոյի առասպելը ծագել է տոտեմիզմի դարաշրջանում, երբ վիշապ-օձերը համարվում էին տոտեմներ: Սակայն երկրագործության և անասնապահության զարգացման շնորհիվ այս հասկացությունը տրուվել է, և բարի ուժերին զուգահեռ ստեղծվել է ընդհանուր թշնամի ուժերի մի հավաքական կերպար՝ վիշապ-օձերի ու գների կերպարանքով: Զանդո վիշապը հավաքական, ընդհանուր հասկացողություն է, մարմ-

նավորում է հասարակական, շար, ճնշող, թշնամի ուժերը, եթովպական ծոլովրդի թշնամիների գաղափարը: Այդ վիշապամարտի դիցարաննական առասպելը վերամշակվելով նպաստել է քրիստոնեության տարածմանը եթովպիայում: Զանգայի առասպելից երևում է, որ Եթովպիայում գոյություն է ունեցել վիշապ-օձերի և կախարդ-հմայիլների պաշտամունքը: Դա նշանակում է, որ Եթովպիայի հնագույն բնակիչները կոռապաշտ էին, և հիմքից զուրկ են պնդումները այն մասին, որ իր նրանք հնագույն ժամանակներում մի աստված են պաշտել: Այդ թյուր հետևողունն արկել է Եթովպիայում տարածված մի առասպելից, որի համաձայն Եթովպացիները սերել են նոյն առաջիկա երկրորդ որդուց՝ Գամից, սրա որդիներից էլ՝ կուշերը (նուրիացիները): Մեր կարծիքով նոյից սերեկու առասպելը ծագել է քրիստոնեությունը Եթովպիա մուտք գործելու ժամանակներում՝ որպես պայքարի միջոց կոռապաշտության դեմ:

35 E. A. W. Budge, A History of Ethiopia, London, 1928, vol. I, p. 142.

36 Զանդո-Վայնարայի առասպելը հիշեցնող մի պատում էլ կա եզիպտական դիցարանության մեջ: Արկի աստվածունի Խսիսը ցանկանում է իմանալ արկի Ռա աստծու գաղտնարանի անունը, սակայն վերջինս մերժում է բանալ իր գաղտնիքը: Խսիսը ստեղծում է տեղի ձևով մի վիշապ և այն կախարդելով, խրում է Ռա աստծու հանապարհին: Տեղանք վիշապն արկի աստծուն հարվածում է այնքան ժամանակ, մինչև նա հայտնում է իր գաղտնիքը և մահանում: Այդ առասպելի վերապրուկները մինչև օրս էլ պահպանվել են աֆրիկյան տարրեր ծովովուրդների մոտ: Ոնքիորսներն, օրինակ, գոմեշը սպանում են մոտավորապես այնպես, ինչպես Խսիսի վիշապը՝ Ռա աստծուն:

37 Վալդե-Մարիամը, օրինակ Կասա-Թեոդորոսի ըմբոստրության դրվագը վերապատճել է այսպես. «Վայզարո Տավարայի հետ ամուսնալու շնորհիվ լինելով Ռաս Ալիի փեսան, Կասան մնաց աներոշ տանը, բայց մի օր, երբ նա որդադել էր ընդունել և խնդրել էր, որ իր ճաշը ուղարկեն, նրան որպես մսեղեն ճաշատեսակ մատուցեցին կենդանու առջկի սոտքերը: Նա դրանք ետ ուղարկեց գոռալով. Լեզ Կասան այդ մսից չի ուտում, ինչ է, ինձ ջրկիր կնոշ տե՞ղ են դրել: Նրա կինը՝ Վայզարո Տավարայն ասաց. Դու ոչ մի կտոր հող լունե՞ս: Լավագույն դեպքում մեզ մնում է պատրաստվել այստեղից հեռանալու համար: — Ինչպես թե հող լունեմ, գոռաց Կասան, — զեր կտեսնենք: Դրանից հետո նա Կվարա իշավ կնոշ հետ միհասին» (տե՛ս Mondon-Vidaillet, Chronique de Théodore II, pp. 2—3).

Բլանկն այդ նույն դրվագը վերապատճում է հետևյալ ձևով. Կասան, որ վիրավորվել էր թուրքերի ղեմ կովում, «ստիպվեց կանգ առնել Դեմքեայի սահմանի վրա: Նա բանակատեղից զոքանշին լուր ուղարկեց իր վիճակի մասին, խնդրելով մի կով՝ արիստինիացի բժիշկների պահնաջած վարձը: Վայզարո Մանանը, որ միշտ ատել էր Կասային, փութաշանորեն օգտագործեց առիթը ... որպեսզի կոտրի նրա հպարտությունը և նրան ուղարկեց կովի փոխարեն մի կտոր միս, վիրավորական մի նամակի հետ միասին: Վիրավոր պետի մահին մոտ էր նրա կինը, նրա դժբախտությունները բաժանող բաշարի ընկերը, որին նա սիրում էր: Ականջ զնելով թագուհու հեգնական նամակին, նա խոր նվաստություն զգաց, և նրա՝ գալլացու նուացող արյունը բոցավառվեց: Նա ոտքի կանգնեց և Կասային ասաց, որ ինքը սիրում է քաշերին, ատում վախկուներին, և նրան կլրի, եթե նա արյամք վրեժինդիր լինի այդ վիրավորանքի համար: ... Եվ վրեժինդրության ծարավը ներթափանցեց Կասայի սիրտը: Ումերը բավականաշատ վե-

բազմնելուց հետո նա վերադարձակ Կվարա և իրեն անկախ հռչակեց բացահայտ կերպով (H. 111ու, Ma captivitè, pp. 3—4),

Ահա և Տիմոթեոսի տարբերակը. «Այն ատենները թեղորոսո, որ Կասա կըսվեր, կուգա Ռաս Ալիին քով զինվորության կմտնե, և յուր ցույց տված քաջություններով սիրելի կըլլա անոր աշքին մինչև կփեսայանա՝ անոր աղջիկը առնելով։ Օր մը անիկա որդաղեղ (կոսո) խմած ըլլալով աներոշմեն կով մը կինդրե, աներոշ մայրն ալ, որ դեռ կենդանի էր, նախատելով մը հրաման կընե սպասավորաց, ասելով, —Պրդաղեղ ծախողին տղուն կտօր մը միս տվեթ որ երթաւ Այս խոսքը խիստ ծանր կուգա Կասային, կզայրանա ու կրակ կդառնա կնկա մը բերնեն այնպես նախատինք ընդունելուն։ Յուր կինը կիմանա այս բանը, ու կդառնա կըս Կասային.—Գոտիդ կապե շուտով, ով Կասա, ի՞նչ ես կեցեր մնացեր կնկա մը պես։ Ըսել կուզե կտրիճ եղիք ու ապստամքեւ Կնկան խոսքերն ավելի իրախուսվելով ու զրգովելով, Կասան հետը կառնու զինքն ալ ու կփախչի յուր հայրենի երկիրը՝ Կվարա, և քիչ ժամանակի մեջ հհաջողի անոր տիրելա և ալն»

38 Abyssinia and his people or Life in the Land of Prester John (Consul, Plowden's description of Abyssinia 1852—5) Edited by J. C. Hotten, London 1868, p. 187—188.

39 Տիմոթեոսը հաղորդում է. «Թե որ թագավորը դրամ, պարեն կամ ուրիշ որևէ բան մը խնդրելու ըլլա տեղաց մը, նույն տեղվույն կառավարիլ իշխանը լուր կուտա յուր մարդոց և գյուղացվոց ծերերուն հհայտնե անոնց թագավորին պահանջը և անոնց հաճությամբ ընդունելուն կրամնե խնդրածը յուրաքանչյուր գյուղեւ վրա, դարձալ անոնց ձեռքով ամեն մեկ գյուղին յուր կարողության համեմատ, և դարձալ յուրաքանչյուր գյուղի ընկած բաժինը նույն կերպով կրամնե ամեն մեկի տան վրա»:

40 Հստ Տիմոթեոսի, ծերերի խորհուրդը իրավունք ուներ վճռելու քաղաքի և քաղաքցիների տարբեր հարցեր, ընդունելու կամ մերժելու կովի ելած իշխաններին օգնություն ցույց տալու առաջարկը և այլն։ Թերենք երկու օրինակ. Գարբե Մարիամ իշխանը, հուսալով օգնական ուժեր ստանալ Բելսայից, «Ելուր կիրկի Բելսայու ծերերին, հայտնելով. «Ես ձեր ստացվածքը հափշտակելու շմբ եկած, այլ միայն պատերազմող մարդիկ կուզեմ ձեզմե։ Սերերը պատասխանեցին. «որքան պատերազմող մարդիկ ունենք թագավորին քով կզանվին. այդ խնդրենիդ անհնար է, իսկ թե որ արմտիք, պաշար կուզեք, տանք ձեզի։ Կամ «գեմբեացիք, որ առանց իշխանի էին, երկու կողմի բաժանվելով, մեկ կողմը Տեսու Գորազի գորավոր ապստամքի իշխանության ներք կմտնեն, և մյուս մասը, իրենց ծերունյաց հաճությամբ Զելգայի կուսականներուն անձնատուր կըլլան։»

41 Օրինակ. Ազառ երկրում չզրի մեծ ցամաքություն էր, պատմում է Տիմոթեոսը «գյուղացիք կուգային և, իմանալով մեր եկեղեցական ըլլալը, կաղալեին որ աղոթք թինքը, որ աստված անձրւ տա իրենց ... խաչանպիստ ըրինք և աղոթք ընելով, աստծո ողորմությունը խնդրեցինք։ Չենք գիտեր թե արդյոք մեր աղոթքը լսելի եղավ, թե աստված ժողովրդոց և մեր երեսին ողորմեցավ. երկու անգամ այնքան հորդ անձրւներ իշան, մինչև հեղեղներ կապեցին ու գետեր հորդեցան ...։ Գյուղացիները հավատում են, որ անձրւը տեղում է աստծու կամեցողությամբ, իսկ Տիմոթեոսը վստահ չէ («շէնք գիտեր»), թե ինչպես պատահեց որ անձրւ տեղաց Ազառ երկրում, Ուղեգործությունը կան այդ կարգի նաև այլ փաստեր։